


Գ Լ Խ Ա Վ Ո Ր
ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
— ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ
Դ Ա Շ Տ Ի Ն

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧНОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



338.14.

4-78

338.14
A 392

408000000 00

107 FEB 2010

ԳԼԽԱՎՈՐ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ— ԿՈՆՏՆՏԵՍԱՅԻՆ ԴԱՃՏԻՆ

ИНСТИТУТ
ВОСТОЧНОЕВРОПЫ
Академия Наук
СССР

ԿՈՒԲԱՆԻ ՀՈՂԻ ՀՈԶԱԿԸ

Միստեր Կեմբրելլը դիտում էր Կուպրանի հողերը։ Սև, փայլուն ավտոմոբիլը դանդաղ շարժվում էր անազին դաշտի յեզրով։ Հողը պատկանում էր կոլտնտեսության։ Դեռ նոր էլին աշխատելու տրակտորները, յերբ այդ հողի վրա յերկվում էլին անհատական տնտեսությունների սահմանների խայտարդեա հետքերը։ 1929 թվականն էր։

Միստեր Կեմպրելլն ինքն էլ ունի այդպիսի դաշտեր։ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում նրան պատկանում է խոշոր գյուղատնտեսական ձեռնարկություն, վորը, մինչև Սալսկի տափաստաններում «Գրգանտ» խորտնտեսության կազմակերպումը, աշխարհիս խոշորագույն տնտեսություններից մեկն էր։

Միստեր Կեմպրելլը շատ հողեր էր տեսել։ Իր ձեռնարկություն համար հարմար հող փնտռելու նպատակով նա շրջել էր Կանադան, Իսկոտան և Մեքսիկան։ Յորենի նոր տեսակներ գտնելու համար նա յեղել էր Արխանիայում, Ավստրալիայում, Ադվանստանում։ Նա տեսել էր նաև Յեվրոպայի հին պարարտ հողը և Կանադայի քնքուշ խոպան հողերն ու Ավստրալիայի համեստ դաշտերը, սակայն Կուբանի հողի նմանը նա վոչ մի տեղ չէր պատահել։

Կուբանը վաղուց էր գրավել կապիտալիստի ուշադրությունը։ Կուբանի սևահողի աղմկալից հռչակը հայտնի դարձավ վոչ միայն մեր յերկրում, այլ և ամերիկացի ձեռնարկողին։

23 MAY 2013

Կրասնոդարի ռայոն գալը, Կեմպրեկի թարգմանիչը ծանոթացրեց նրան հետաքրքրական վիճակագրական ժողովածույին, վորը հրատարակել եր 1927 թվին Կուբանյան-Սևծովյան մարզային պլանային հանձնաժողովը։ Ամերիկական միատերի հուշատետրը հավանական եր, վոր մինչև այժմ ել պահում ե ժողովածույից հետևյալ քաղվածքը՝

«Յուբահատուկ սեահողը, ընդհանրապես Կուբանի բացառիկ հարուստ հողը, ապահովում ե նույնպես բացառիկ բերքատվությունը, մի բան, վոր չի կարելի ասել հյուսիսային և արևելյան ավելի չորային մարզերի վերաբերմամբ։

Կուբանի սեահող ռայոնը իր բնական պատմական պայմաններով առաջինն ե հանդիսանում Ռուսաստանում, գուցե և միակն ամբողջ յերկրագնդի վրա»։

Կուբան-Սևծովյան հանձնաժողովի ցուցմունքները հանգիստ չեյին տալիս Կեմպրեկին։ Ովկիանոսի մյուս կողմում գտնվող հեռավոր յերկրից 1929 թվականի ամառը նա խորհրդային Միություն յեկավ «յերկրագնդի վրա միակ սեահողը» տեսնելու համար։

Միտեր Կեմպրեկն ուշադրությամբ դիտում եր Կուբանի հողերը, և նրա հետաքրքրությունն արտահայտվում եր կապիտալիստական ազահությամբ և չարամիտ ատելությամբ գեպի խորհուրդները։ Մերթնդմերթ նա ասում եր շոֆերին. «Կանգ առ»։

Մեքենան կանգ էր առնում, և միտեր Կեմպրեկը գնում եր տրակտոր անցած դաշտը։ Նա ձեռքի վրա յեր առնում սեահողի մանր կոշտերը և առանձին խնամքով մանրացնում մատների արանքներում։ Անկասկած, հողն ուներ առանձին հատկություններ—դա փափուկ, պարարտ հող եր։ Այդպիսի հող նրան չեր պատահել վոչ Կանադայում, վոչ Արգենտինայում, վոչ Մեքսիկայում, վոչ Ավստրալիայում, Յեթե Կուբանը պատկաներ Միացյալ Նահանգներին, նա այստեղ կփոխադրեր իր տնտեսությունը, կստիպեր, վոր աշխարհը խոսի նրա անդրերի մասին, հեքյաթային յեկամուտների մասին—պատկերներ մտնում Կեմպրեկը։ Բայց...

միտերը չարամիտ դառնությամբ հիշում եր, վոր Կուբանի սեահողերն արդեն վարված են տրակտորներով, վորոնց վրա ծածանվում են կոլտնտեսությունների կարմիր դրոշները, վոր 1929 թվականն ե, վոր ծավալվում ե կոլեկտիվացման ալիքը, և, ախ քաշելով, վերադառնում եր ավտոմոբիլի մոտ։

Կուբանի հողի հոշակը Կեմպրեկն Ամերիկա հասցրեց։ Այդ մասին նա հայտնեց նաե իր մտերիմ ընկերոջը՝ պրեզիդենտ Հուվերին և բոլոր նահանգների Ֆերմերներին ստիպեց աշխարհիս յերեսին միակ սեահողի կարտը քաշելու։

Կուբանի սեահողերի մասին Կեմպրեկը պատմում եր ամերիկական շատ թերթերում և խՍՀՄ-յան մասին գրքում։ Նրա բոլոր նկարագրություններում արտահայտվում եր մի միտք—ապացուցել Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներին, վոր Կուբանը կապիտալիստների համար համեզ պատառ ե, վոր ամերիկական բուրժուազիան պետք ե ոժանդակություն ցույց տա խորհրդային Միության թշնամիներին՝ ինտերվենտներին և սպիտակ գվարդիականներին։

Այսպես գնահատեց թշնամին Կուբանի սեահողը։ Ուրեմն մենք առավել ևս պիտի գնահատենք այդ հողերը, ավելի լավ մշակենք, բարձր բերքեր ստանանք և ծառայեցնենք սոցիալիստական շինարարությանը։

«Անսպառ և անհամար հնարավորություններ ե պարունակում իր մեջ Կուբանը։ Յեվ հարուստ, պարարտ հողերը, և տաք, խոնավ կլիման, և հաճախակի տեղումները ցույց են տալիս այն, վոր այդ տեղը կարող ե դառնալ ծաղկած վայր»։

Զգացված այդ խոսքերը պատկանում են ամերիկական միտերին։ Նրանք տալված են Բալտիմորի «Sun» թերթում, վոր նշանակում ե «Յուբաքանչյուրին իրենը»։ Կեմպրեկի հողվածի կողքին գետեղված եր փարիզյան ինչ վոր սպիտակ-գվարդիական թերթից մի քաղվածք, ուր (քանի յերբորդ անգամ) գեներալական թուղթ մրտողները կոչ եյին անում պատերազմելու խորհրդային Միության դեմ, ապացուցում եյին խՍՀՄ-յան հարավային մարզերի գրավման ոգուտը և առաջին հերթին—Կուբանի։

ZUON-APM GCP

И. А. МАРКХАНОВ

0267.67

ԿՈՒԲԱՆԻ ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒՁՈՒՄ ԵՆ ՏԱԼ ՈՒԵԿՈՐԴԱՅԻՆ ԲԵՐԲ

Կապիտալիստ միստեր Կեմպերլին ատերությամբ լցված է զեպի բոլշեիկներն ու խորհուրդները: Նա կուզենար, վոր հազարավոր քայքայված, աղքատացած գյուղացիներ աշխատեն նրա մեքենաներով՝ նրան պատկանող Կուբանի հողի վրա:

Բայց Կուբանի սեահողերը պատկանում են պրոլետարական պետութեանը: Նրանք գտնվում են այն յերկրում, ուր վերացված է հողի և արտադրութեան բոլոր միջոցների մասնավոր սեփականութեունը, ուր գյուղական տնտեսութեունը վերջնականապես հաստատվել է սոցիալիստական ճանապարհին:

«Գոյութեուն ունի կապիտալիստական ուղի, վորով գյուղական տնտեսութեունը խորորանում է նրա մեջ կապիտալիզմի արմատավորման միջոցով, մի ուղի, վորը տանում է զեպի գյուղացիութեան քայքայումը և կապիտալիստական ձեռնարկութեունները զարգացումը գյուղատնտեսութեան մեջ: Այդ ուղին մենք մտնում ենք, վորպես խորհրդային տնտեսութեան հետ անհամատեղելի: Գոյութեուն ունի մի ուրիշ ուղի ևս, վորով գյուղատնտեսութեան մեջ կազմակերպվում են խորհրատնտեսութեուններ և կոլտնտեսութեուններ, մի ուղի, վորը տանում է մանր գյուղացիական տնտեսութեունների համախմբումը կոլեկտիվ տնտեսութեունների մեջ, զինված են տեխնիկայով և գիտութեամբ և զեպի կապիտալիստական ելեմենտների վտարումը յերկրագործութեունից: Մենք այդ ուղիի կողմնակիցն ենք», այսպես ասաց ընկ. Ստալինը մարքսիստ—գյուղատնտեսների կոնֆերանսում 1929 թվին, յերբ միլիտանավոր աշխատավոր գյուղացիներ կանգնում էին կոլեկտիվացման ուղիի վրա:

Այդ ժամանակից անցել է արդեն մի քանի տարի: Խորհրդային իշխանութեունն այդ տարիների ընթացքում

վճռական հաղթանակներ է ունեցել սոցիալիզմի համար մղվող պայքարում: ԽՍՀՄ-նը թեակոխել է սոցիալիզմի ժամանակաշրջանը: Սոցիալիզմը դարձել է տնտեսութեան գերիշխող և համարյա միակ ձևը:

Հնգամյակն իրագործված է չորս տարում: Բոլշեիկյան կուսակցութեունը ջարդել է աջ—գլխավոր վտանքը և «ձախ» թեքումները, հակահեղափոխական արոցիկիզմը, ստեղծել է հզոր ծանր արդյունաբերութեուն, վորը հանդիսանում է մեր սոցիալիստական տնտեսութեան հիմքը:

Կոլտնտեսային կառուցվածքը վերջնականապես ամրապնդվել է: Կուսակցութեունը հիմնովին վերազինել է կոլտնտեսութեունները տեխնիկական տեսակետից:

Յեթն, ասենք, յերկու տարի առաջ Հյուսիսային Կովկասում կար 5—6 հազար տրակտոր, ապա այժմ—18 հազար, իսկ դարնան, դարնանացանի ժամանակ կլինի 20 հազարից վոչ պակաս դրանց մեծ մասը մեր գործարանների արտադրանքն է:

Մենք արդեն ունենք հենց իրեն, գյուղական տնտեսութեան մեջ մոտ յերկու հազար ավտոմոբիլ, մոտ յերկու և կես հազար կոմբայն, այսինքն՝ ավելի կատարելագործված մեքենաներ:

1929 թվին ունեյինք հազարից քիչ ավելի տրակտորային գութաններ և ցանիչներ: Այժմ ունենք գութան—18 հազար հատ, ցանիչ—10 հազար, խրճկապիչներ (նոր մեքենա)—3400, պիկիկեր—1200, տրակտորային կուլտիվատոր—2 հազարից ավելի: Այժմ ունենք տեխնիկական մշակույթների համար մի շարք հատուկ նոր մեքենաներ, վորոնց մասին յերկրամասն առաջ զաղափար չուներ:

Կուբանը Հյուսիսային Կովկասի բոլոր ռայոններից ավելի տրակտորներ ստացավ: 1931 թվականին Կուբանի ռայոններն ունեյին ընդհանուր առմամբ 69 հազար ձիու ուժի տրակտորներ, իսկ 1932 թվին—95 հազար ձիու ուժի: Միայն մի տարվա ընթացքում Կուբանի տրակտորային պարկն ավելացավ 26 հազար ձիու ուժով: Իսկ Հյուսիսային

Կովկասի մնացած ռալոնները (բացի Կուբանից) այդ տար-
վա ընթացքում ստացան միայն 25 հազար ձիու ուժի նոր
տրակտորներ (1931 թվին կային 143 հազար ձիու ուժի
տրակտորներ, 1932 թվին — 168 հազար ձիու ուժի տրակ-
տորներ)։

Բացի այդ, պրոլետարական պետությունը Կուբանի
դաշտերն ուղարկեց մեծ քանակությամբ կոմբայներ և
գյուղատնտեսական այլ մեքենաներ, ստեղծեց ՄՏԿ-նե-
րի խիտ ճյուղավորումներով ցանց, մեծ վարկեր բաց թո-
ղեց շինարարության համար, բազմապատիկ անդամ իջեց-
րեց տուրքային պարտավորությունները։

Կուսակցությունն ու կառավարությունը վերջել են
1933—34 տարվա ընթացքում ամբողջովին մեքենայացնել
գյուղատնտեսական բոլոր հիմնական աշխատանքները Կու-
բանում։ Վերև հիշած թվերը ցույց են տալիս, վոր դա բո-
լորովին ռեալ, փաստորեն իրացվող գործ է։

Կոլեկտիվացրած և մեքենայացրած Կուբանի դաշտերում
հսկայական չափով աճել են բարձր բերքեր ստանալու հը-
նարավորությունները, վորոնք կարող են ռեկորդային ցու-
ցանիշներ տալ ամբողջ աշխարհին։

Կուբանի դաշտերի բերքատվությունը, ճիշտ և, միշտ ա-
վելի բարձր և յեղել, քան Հյուսիսային Կովկասի մնացած
ռալոնները։

Դեռ 1925 թվին աշնանացան ցորենի յերկրային միջին
բերքն արտահայտվում էր 8,8 ցենտներ մեկ հեկտարից,
իսկ Կուբանում հավաքում էին մեկ հեկտարից — 9,8
ցենտներ։

Դեռ 1929 թվին, յերբ համատարած կոլեկտիվացման ա-
լքքը նոր էր ծավալվում, Կուբանի ընդհանուր հացահատի-
կային արտադրանքի բերքահավաքն ավելի բարձր էր, քան
յերկրամասի մյուս ռալոններինը։ Հյուսիսային Կովկասի
բնակչության յուրաքանչյուր հարյուր հոգուն 1929 թվին
ընկնում էր 112 հեկտար ցանքս, իսկ Կուբանում — միայն
103 հեկտար։ Կուբանն ավելի քիչ է ապահովված ցանքսերի

տարածությամբ։ Բայց, չնայած դրան, Կուբանի բնակչու-
թյան յուրաքանչյուր հարյուր հոգուն ընկնում էր հացա-
հատիկային արտադրանքի ընդհանուր բերքահավաքից 790
ցենտներ, իսկ ամբողջ յերկրամասում — 737 ցենտներ։ Այս-
պիսով, Կուբանը 1929 թվին 103 հեկտար ցանքսատարա-
ծությունից հավաքում էր 790 ցենտներ հացահատիկ, մինչ-
դեռ ամբողջ յերկրամասը ընդհանրապես 112 հեկտար ցանք-
սատարածությունից հավաքում էր միայն 737 ցենտներ։

Ահա Կուբանի հողում թաղնված հարուստ բնություն հը-
նարավորությունների փայլուն ապացույցը։ Սակայն այդ
հնարավորություններն ավելացան Կուբանի գյուղատնտե-
սության կոլեկտիվացման և մեքենայացման աճման հետ
միասին։ Դրա շնորհիվ, առանց այդ էլ բարձր բերքատվու-
թյունը շեշտակի կերպով ավելի բարձրացավ։

1931 թվականին, համատարած կոլեկտիվացման տարում
աշնանացան ցորենի յերկրային միջին բերքը արտահայտ-
վում էր մեկ հեկտարից 8,4 ցենտներ, իսկ Կուբանում — մեկ
հեկտարից — 11,1 ցենտներ։ Այդ տարում հացահատիկային
ցանքսատարածությունը Կուբանում կրճատվեց տեխնիկա-
կան մշակույթների ավելացման հաշիվին։ Յերկրամասում
բնակչության յուրաքանչյուր 100 հոգուն ընկնում էր 122
հեկտար ցանքս (1929 թվի 112 հեկտարի դիմաց), իսկ Կու-
բանում — 93 հեկտար (1929 թվի 103 հեկտարի դիմաց)։
Չնայած հացահատիկների ցանքսերով քիչ ապահովված լի-
նելուն, բայց և այնպես Կուբանի ընդհանուր բերքն ավելի
բարձր էր, քան յերկրամասի մնացած բոլոր ռալոններինը։
Կուբանի բնակչության յուրաքանչյուր 100 հոգուն ընկ-
նում էր 1057 ցենտներ, իսկ յերկրամասում — 957 ցենտներ։
Կուբանը 93 հեկտարից 100 ցենտներ ավելի բերք էր ստա-
նում, քան յերկրամասի մյուս ռալոնները 122 հեկտարից։

Հետաքրքրական է և թվերի ոչապիսի համեմատությու-
նը — 1931 թվին, համատարած կոլեկտիվացման տարում, կո-
լեկտիվացված և մեքենայացված Կուբանը 93 հեկտարից հա-
վաքեց 1057 ցենտներ ընդհանուր հացահատիկային բերք,

մինչդեռ 1929 թվին 103 հեկտարի ընդհանուր բերքը հա՝
վասար եր 790 ցենտներին: Համատարած կոլտնտեսաթիւն
գաշտերի և մանր մեծատնտեսների փոքրիկ հողաբաժիննե-
րի բերքերի միջև յեղած տարբերութիւնը հսկայական է:
Սա ապացուցում է այն, վոր գործը միայն բնութիւնն ապ-
մաններում չէ: Դա փայլուն ապացույց է, վոր բարձր բեր-
քի պատճառները գտնվում են հենց կոլտնտեսութիւնների
ունեցած հնարավորութիւններում: Ճշմարիտ իսկ քաջող ուժի
և ինվենտարի հասարակ գումարումը մեծ եֆեկտ տվեց:
(ՍՍՍՖՍՐ)

Կուլանը տիրում եր խորհրդային Միութիւն լավագոյն
հողերին: Կուլանը ԽՍՀՄ-յան բանվոր դասակարգից ստա-
ցավ ավելի շատ տրակտորներ և գյուղատնտեսական մեքե-
նաներ, քան Հյուսիսային Կովկասի մնացած ռայոնները:
Կուլանը կարող է տալ բերքատուութիւնն ռեկորդներ:

ԻՆՉ ԵՆ ՏԱԼԻՍ ԿՈՒԲԱՆԻ ԿՈՆՏԵՆՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ի՞նչ են տվել Կուլանի կոլտնտեսութիւնները խորհրդա-
յին յերկրին: Ի՞նչ են տվել նրանք պրոլետարական պետու-
թիւնից ստացած տրակտորների և շատ ուրիշ կատարելա-
գործված մեքենաների փոխարեն: Ի՞նչով պատասխանեցին
նրանք կուսակցութիւն և կառավարութիւնն տված ռգնու-
թիւնը և բազմատեսակ արտոնութիւններին: Ի՞նչպէս ռգ-
տագործեցին նրանք Կուլանի պտղաբեր սեահողը:

1932 թվի աշնանը խորհրդային Միութիւն թերթերը
հաղորդեցին հետեյալ անորինակ դեպքը:

«Կուլանը չի կատարում իր պարտականութիւններ-
ը պրոլետարական պետութիւնն առաջ: Դեռ վերջնա-
կանապէս չլախջախված կուլակութիւնը կազմակեր-
պում է հացամթերման և աշնանացանի սարտած,
Բերքատուութիւնը զգալիորեն պակասեց»:

Թվին ու փաստերը ահազանգ տվին: 1931 թ. Կուլանում
աշնանացան ցորենի բերքը կազմում եր յերկրամասի միջին

բերքի 132 տոկոսը: 1932 թվին աշնանացան ցորենի բերքը
Կուլանում կազմում եր միայն յերկրամասի միջին բերքի
104,4 տոկոսը:

1926 թվին ամբողջ Հյուսիսային Կովկասի ցորենի ընդ-
հանուր բերքի 45,4 տոկոսը կազմում եր Կուլանի տվածը:
1931 թվին—45,8 տոկոսը, իսկ 1932 թվին չեղած փաստ—
Կուլանի տեսակարար կշիռը յերկրային բերքահավաքի մեջ
իջնում է մինչև 30,7 տոկոս:

1929 թվին 100 կուլանցիների հավաքած բերքը ամ-
բողջ յերկրամասի բնակչութիւնն հարյուր հոգու հավաքածի
համեմատութիւնը, կազմում եր 107,4 տոկոս, 1931 թվին—
110,4 տոկոս, իսկ 1932 թվին միայն 75,2 տոկոս:

Այդ ինչպէս պատահեց:

Նոյեմբեր ամսի մի ցուրտ յերեկո, յերբ բարակ սառույ-
ցը ծածկել եր անձրևի ջրով լցված բոլոր փոսերը, յերբ
գորշ տափաստանը ծածկված եր յեղյամով, յերբ աեմանային
աեխառանգներ ծամանակը մոտենում եր վախճանին, 1932
թվի նոյեմբերի 13-ին Նովո-Տիտարովսկայա ստանիցայի
(Կրասնոդարի ռայոն) կուսկոմի նիստում, «Զավեստ Իլիչա»
կոլտնտեսութիւնն նախագահ Շուստովը հաշիվ եր տալիս:
Նովո-Տիտարովսկայա ստանիցան միչև այդ ուրը ցանել եր
133 հեկտար—700-ի փոխարեն, վարել եր 71 հեկտար—700-ի
փոխարեն, հացը հանձնել եր 490 ցենտներ,—5000-ի փո-
խարեն: Սակայն Շուստովին այդ չեւ հուշում: Հանդիստ և
անվրդով, տաք մուշտակը հագին, նա ծանր, կիսաձայն խո-
սում եր, ծամում եր իր ռպորտունիստական մաստակը, դան-
դադորեն տեղեկութիւններ փնտռելով հաշիւեցուցականներում:
Նա ասում եր, վոր այդ տարում բերքը սակավ է յեղել և
հացամթերումների պլանը չի կարելի կատարել (Շուստովը
մոռացել եր, վոր, յեթե վորոշ աննպաստ պայմանների
պատճառով բերքատուութիւնը Կուլանում անցյալ տարվա-
նից չաճր եր, ապա և հացամթերումների պլանը յերկու ան-
գամ պակաս եր): Վոր կոլտնտեսութիւնն 212 հեկտար ցո-
րենը փչացել է, վոր ամբողջ ժամանակ կարծում էին, վոր

աշխատող ձեռքեր քիչ կլինեն բերքահավաքի համար, ձգ-
ձգում եյին պլանը, չեյին ընդունում, վիճում եյին ռայոնի
հետ և վիճելու ու բանակցությունների ժամանակ մոռանում
եյին հատիկի մոմային հասունությունը և բերքահավաքն
սկսում եյին այն ժամանակ, յերբ հատիկներն ամբողջապես
թափվում եյին:

Շուտովի և Նովո-Տիտարովսկու կոլտնտեսության մնա-
ցած ղեկավարների ճառերում, և վոչ միայն ճառերում, այլ և
նրանց ամբողջ գործունեություն մեջ ցայտուն կերպով յե-
րևում եր, վոր նրանք ձգտում են կոլտնտեսությունը բա-
ժանել պետությունից, հակադրել կոլտնտեսության շահերը
յերկրի շահերին:

Կոլտնտեսությունը—դա սոցիալիստական տիպի կապ-
մակերպություն է: Դա անվիճելի յե Սակայն կոլտնտեսա-
կանը դեռ սոցիալիստ չե: Նա, յերեկվա միմաստնեւոր, դեռ
չի վերացրել իր մանր-բուրժուական հոգեբանությունը: Ա-
ռաջին հնգամյակի հանրագումարների մասին իր արտասա-
նած պատմական ճառում, ընկեր Ստալինն առանձնապես
ընդգծում եր, վոր՝

«Մարդկանց գիտությունն իր զարգացման ընթաց-
քում հետ ե մնում նրանց փաստական դրությունից:
Կոլտնտեսականներն իրենց դրությամբ արդեն մենա-
տնտեսներ չեն, այլ կոլեկտիվիստներ: Բայց նրանց
գիտակցությունը դեռ հին, մասնավոր-սեփականատե-
րական ե»:

Անձնական-շահադիտական տրամադրությունները դեռ
շատ ուժեղ են կոլտնտեսային մասսայի մեջ: Խոսել հացա-
մթերումների պլանի անկատարելի լինելու մասին, պակաս
ցույց տալ բերքատվությունը, չպայքարել գողերի և սրի-
կանների դեմ, ոժանդակել կոլտնտեսային բարիքի հափշ-
տակման, կոլտնտեսության շահերը հակադրել պրոլետա-
րական պետության շահերին,—այդ նշանակում ե գերի լի-
նել կոլտնտեսականի մանր-սեփականատերական տրամադ-
րություններին, գերի լինել կուլակին, ոգնել դեռ ևս վերջ-

նականորեն չլախնախմբ թշնամուն՝ սարտաժ կազմակեր-
պել կուսակցության ու կառավարության բոլոր միջոցա-
ռումներին:

Մոռանալով այդ մասին, չկարողանալով սոցիալիստա-
կան ձևերի յետևում նկատել դասակարգային թշնամու
մոռլթը, չհասկանալով, վոր «այն կոլտնտեսություններին,
վորոնց մենք չենք ղեկավարում, ղեկավարում են մեզ թշ-
նամի հակախորհրդային տարրերը» (Մոլոտով), Կուբանի
կոլտնտեսությունների շատ ղեկավարներ բռնեցին պրոլե-
տարական պետությունից առանձնանալու ուղին, հացը
թագցնելու և ծախձխելու ուղին, գնացին կուլակի սանձի
յետեից: Նրանք կոլտնտեսությունը թողին ինքնահոսին,
անտես արին անտնտեսավարությունը, անթույլատրելի
վերաբերմունքը դեպի կոլտնտեսային գույքը, բարբարոսա-
կան վերաբերմունքը դեպի բարերեր, բարձրորակ հողը,
Փոխանակ վերացնելու բերքատվության իջեցման և հա-
ցամթերումների պլանը չկատարելու իսկական պատճառնե-
րը, նրանք սկսեցին խաբել պետության, սկսեցին գլխնե-
րից հանել ուրիշ, «որյեկտիվ», իբր թե վոչ վոքից կախում
չունեցող պատճառներ:

Այսպես եյին ղեկավարում Կուբանի շատ կոլտնտեսու-
թյունները. կուլակի հլու գործիք լինելուց դառնում եյին
կուսակցության և խորհրդային իշխանության բացահայտ
թշնամիներ: Կուստոմներ ունեցող այդ թշնամիները շատ
ավելի վտանգավոր են կուլակներից, վորոնց համար աշխա-
տում են նրանք: Ավելի վտանգավոր են, վորովհետեւ նրանք
իրենց հանցավոր գործողությունները քողարկում են
կուստոմով, վորովհետեւ նրանց ավելի դժվար ե մեր-
կացնել:

Կուստոմն ունեցող այդպիսի թշնամիների դեմ կուսակ-
ցությունն ամենավճռական և ամենախիստ միջոցներ ե
ձեռք առնում:

Մեր կուսակցությունն ու բանվոր դասակարգը այժմ
իրենց ուշադրությունը բևեռել են Կուբանի սևահող ռայոն-

ներին, վորոնք նույնիսկ քստ թշնամու — ամերիկական կապիտալիստի վկայութեան, ունեն անսպառ, բացառիկ հնարավորութիւններ՝ սոցիալիստական ծաղկած յերկրագործութեան զարգացման համար:

Մաքրելով իր շարքերը կուստոմ ունեցող թշնամիներէն և ուրիշ պնակալից, ոտար տարբերից, կուսակցութեան իր շուրջը կազմակերպում և մասսաներին, անկուսակցական ակտիվին: Այժմ յուրաքանչյուր մեքենատրակտորային կայանին կից կազմակերպւած և քաղբաժին, վորն արդեն ծավալում և մասսայական-բացատրական աշխատանքը կուտնտեսականների մեջ, կազմակերպում և նրանց՝ կուսակութեան կազմակերպած սարսուռով ջախջախելու համար, կուսակցութեանը հաստատորեն առաջադրել և մասսայական աշխատանքի հարցը, այն հարցը, վոր այդ աշխատանքը դրվի «վոչ թե ձեռնարկեն, այլ անմիջականորեն կապվի այն բոլոր գործնական հարցերի հետ, վորոնք լուծում ենք մենք, վորպեսզի այդ աշխատանքը կազմակերպի մասսաներին, գաղափարապես դին և դաստիարակե նրանց՝ գործնական խնդիրների լուծման պայքարում, դրա համար կազմակերպե մասսաներին» (ՀԿ (բ) Կ Յերկրկումի և Յերկրվէ միացյալ պլենումում ընկ. Շերոլդակի զեկուցումից):

Ահա թե ինչու անհրաժեշտ և մեր ստորին կուտնտեսային ու խորհանտեսային կազմակերպութեաններում ստեղծել իսկապես բոլորիկայն կորիզ, իսկապես ունենալ անկուսակցական ակտիվ և կուտնտեսութեաններն իսկապես վերածել այնպիսի կազմակերպութեանների, վորոնք ընդունակ կլինեն լուծել գարնանացանի խնդիրները:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՆԽՆԱՍ ԴԱՇՏԵՐԻՑ

Բերքատուութեան իջեցման և ցորենի բերքահավաքման թուրութեան իսկական պատճառը կարելի չեք հեշտութեամբ գտնել: Գործի դրութեան մասին ավելի ճիշտ հաշվետուութեան տալիս եր ինքը, Կուրանի հողը:

Պրոլետարական դրող ը. Ստավսկին, վորը 1932 թ. աշնանը յեղավ Կրասնոդարի ռայոնի դաշտերում, գրում երհետեյալը. —

«Հարկավոր չեն վոչ ընդհանուր տեղեկագրեր, վոչ վիճակագրութեաններ. ամենապարարտ, ամենաարգաւանդ հողերն իրենք են հաշիվ տալիս, այստեղ ու այնտեղ թախծորեն շրջում են դեռ ևս չհավաքւած յեղիպտացորենի դեղին-կիւսամոնագույն ցողունները, տխուր սեխն են տալիս չհավաքւած արեածաղիկի վտիցողունները: Վարելահողում քոլ ու տատասկ, կարծես «վայրենի դաշտ» լինի, — նրանք կատաղաբար թափվել են այս տափաստանները: Թե աշնանացանը և թե հերկը սակաւ են և չեն հրճվեցնում դիտողին»:

Տիւրքեցկու ռայոնի Նովորոժդեստովնսկի ստանիցայի յերեւե ուղարկած ընդհանուր տեղեկագրից ավելի պերճախոս հաշիվ ելին տալիս այդ ստանիցայի դաշտերը: 380 հեկտար տարածութեամբ հսկայական դաշտերում նույնիսկ մինչև այժմ ձյան տակից յերևում են չհնձված աշնանացորենի հասկերը: Չհնձված արտերը յեղակի չեն: Նովորոժդեստովնսկի ստանիցայի «Պամյատ Լինինա», «Կրասնի Կուրանեց» և Համառուսական Կենտգործկոմի անվան կուտնտեսութեանները ձյան տակ թողին 76 հեկտար գարնանացան ցորեն, 112 հեկտար գարի և 48 հեկտար վարսակ:

Նովորոժդեստովնսկի ստանիցայի ղեկավարների՝ Պավլենկոյի, Ոչկասովի և Սախնոյի շաղակբատ ճառերից ավելի պարզ հաշիվ և տալիս Կուրանի հողը Յեթե վերջինք ստանիցայում անխնամ թողնւած ամբողջ հողը, վորը 1932 թվին բոլորովին չեն վարել, վորը ծածկվել և մարդու հասակի բարձրութեամբ մոլախոտերով, ապա կստացվի մի հսկայական տարածութեան — 6 հազար հեկտար ամենապարարտ, Խորհրդային Միութեան մեջ ամենալավ հող: Յեվ այսպիսի հողը 1932 թվին «հանգստանում եր» Նովորոժդեստովնսկի ստանիցայի կուտնտեսութեաններում:

Նովո-Տիտարովսկի «Զավետ Իլիչ» կուտնտեսութեան նախագահ Շուստովի հանդիստ զեկուցումից՝ ավելի պարզ

հաշիվ ե տալիս մոլախոտերով ծածկված, տափաններով մի քիչ քերված վարելահողը, վորտեղ աշխանացան ե կատարվել: Նովո-Տիտարովսկու, ինչպես և Կուրանի ուրիշ շատ կոլտնտեսություններ, «ուշացրին ցանքը, ուշացրին քաղհանը, ուշացրին բերքահավաքը: Աշխատանքների մի մասը բոլորովին չկատարեցին: Այդ նրանից ե, վոր կոլտնտեսականների մի մասը, ամբողջ կոլտնտեսություններ չեն աշխատում աշնակես, ինչպես վոր պիտի աշխատեն և ինչպես վոր կարելի յս պահանջել, վոր աշխատեն խոշոր, տեխնիկական սպառազինված կոլտնտեսությունները», (ՀԿ (բ) Կ Յերկրկոմի քարտուղար ընկ. Շերոլզակի ճառից): Աշխատելով այդպես, չցանկանալով աշխատել ինչպես պետք ե, Նովո-Տիտարովսկի կոլտնտեսականները ցորենի պարարտ հատիկները ցանում եյին անմշակ, մոլախոտերով լի հողում, այդպիսով ցանքը ափաշկարա վտանգի յենթարկելով: Իր կյանքում յերբեք այդպիսի այլանդակ ցանք չեր կատարի այդ կոլտնտեսականներից ամեն մեկը՝ իր մենատնտեսական մի կտոր հողի վրա:

ՆԱՅԵՑԵՔ ՆԻԿԻՏԱ ՍԱՎՈՇԶԵՆԿՈՅԻ ԱԳԱՐԱԿԻՆ

Մի՞թե Նիկիտա Սավոշենկոն, Նովորոժդեստովենսկի ստանիցայի այդ կոլտնտեսականն այդպես եր ցանում իր մենատնտեսական հողի վրա: Մի՞թե նա տանն եր նստում, յերբ գալիս եր հացի բերքահավաքման յեռուն ժամանակը: Մի՞թե նա հանգիստ իր մնում, յերբ աշնան ցրտերը վրա եյին հասնում, իսկ նրա արտը հնձած չեր լինում:

Յերբեք: Առավոտ ձեգին վեր եր կենում Նիկիտան անկողնից, զարթոցնում եր թե կնկանը և թե յերեխաներին և ամբողջ ընտանիքով արտ եր գնում: Նույնիսկ իննը տարեկան աղջկա՝ Դարյուշկայի համար ել աշխատանք եր լինում — դաշտում նա դարսում — պատրաստում եր խուրձերի կապեր:

Այս մասին բոլորովին ճիշտ ե ասում ընկ, Ստալինն իր «գյուղի աշխատանքը» ճառում, վորն արտասանել ե 1933

թվի հունվարի 11-ին, ՀԿ(բ)Կ Կենտկոմի ու ԿՂՀ միացյալ պլենումում:—

«Այն ժամանակ մենատնտեսն ինքը պետք ե հոգար իր տնտեսություն մասին, քանի վոր նա վոչ վորե վրա չեր կարող դնել այդ տնտեսություն պատասխանատվությունը, վորը միայն նրա անձնական տնտեսությունն եր, և չեր կարող, բացի իրենից, հույս դնել վոչ վորի վրա: Այն ժամանակ մենատնտեսն ինքը պետք ե հոգար ցանքի, բերքահավաքի բոլոր պրոցեսների մասին, յեթե նա չեր ուզում մնալ առանց հացի և դառնալ սովի գոհ»:

Հիշեցեք ընկ. Շերոլզակի, Հյուսիսային Կովկասի Կուսյերկրկոմի քարտուղարի խոսքերը:—

«Յերբ մենատնտեսն աշխատում եր իրեն համար, նա տարին բոլոր, թե լավ ու թե վատ յեղանակին, աշխատում եր քրտնաթոր: Դուք գիտեք, թե ինչպիսին եր մենատնտես գյուղացու յեղիպտական, սուրկական աշխատանքը, գյուղացու, վորը ղինված եր ամենաթաղը գործիքներով, տքնում եր իր մի կտոր մենատնտեսական հողի վրա: Ամբողջ ընտանիքը, մեծից մինչև փոքր, աշխատում եր մի կտոր հաց վաստակելու համար»:

Նիկիտա Սավոշենկոն ինքն ե հպարտանում եր աշխատասիրությունը:

— Ի՞նչ խոսք, վոր բանում եյինք վոնց վոր յեղը — ասում ե նա. — համարյա թե չեր լինում մի կազակ, վորն ամառ տոն կատարի: Դործի տեղից հեռանալ չկար: Դիշերոցերեկ բանում եյինք դաշտերում: Զոր ու գիշեր:

Դիշեր ցերեկ, կլոր տարին տքնում եր առաջ Նիկիտա Սավոշենկոն արտերում, հանգիստ չտալով՝ նույնիսկ իր իննը տարեկան աղջկան: Իսկ ի՞նչ ունեի նա: Մի գույզ ձի և մեկ կով: Յերկու վտիտ ձիով շատ վար չես անի: Նիկիտան ցանում եր 2 դեսյատին աշխանացան և յերկու դեսյատին գորնանացան: Բերքի մեկ յերբորդը տալիս եր կու-

լակին՝ հնձիրով և կախիչով ոգտովելու համար՝ Աղունի մեկ յերրորդը վերցնում եր աղորիքի տերը՝ Մնացած մեկ յերրորդը, ինչպես ինքն և խոստովանում, չե՛ր բավականանում նույնիսկ մինչև «ծնունդ»:

Այսպես եր աշխատում մեծացնես Նիկիտա Սավոլչենկոն: Բայց արդյոք այդպե՛ս և աշխատում կայսնեստակամ Սավոլչենկոն. արդյո՞ք այնպիսի համառ ձգտում ունի լավ մշակել հողը, կանոնավոր կատարել ցփնքը, բերքը հավաքել մինչև վերջին հասկը:

Բոլորովին վոչ:

Յեթե առաջ ամառը Սավոլչենկոյին չե՛ր կարելի գտնել գյուղում, դաշտում եր լինում, ապա այժմ նրան միշտ կգտնես տանը, իր ագարակում:

Նայեցեք Նիկիտա Սավոլչենկոյի ագարակին: Նա ամբողջովին, մինչև տան շինքը խնամքով մշակված է և ցորեն ցանված: Նիկիտան 17 ցենտներ ցորեն ստացավ այդ վոթրիկ հողամասից, վորը նույնիսկ մի հեկտարի չափ չկար Քիչ հեռու հող է հատկացված բանջարանոցի համար: Այստեղ հասունանում են ձմերուկները, կաղամբն ու վարունգները: Վերջիններին համար հողը լավ աղբած է: Նիկիտան աղբը բերել և կոտնտեսության բակից, թեև նրան հանձնարել են այդ աղբը տանել կոտնտեսային դաշտը:

Թերթեցեք Նիկիտա Սավոլչենկոյի աշխարհույնը, նայեցեք նրա բոլորովին մաքուր, չգրված յերեսները: Գրքույկում միայն 15 աշխուր է գրված ամառային ամիսների ընթացքում: Յոթնորյա շաբաթից միայն յերկու ուր է աշխատել Սավոլչենկոն՝ կոտնտեսային դաշտերում: Մնացած որբերում աշխատել է իր ագարակում: Ընկ. Շերտոլանը կարծես հենց այս ագարակի մասին է խոսում.—

«Յե՛վ ահա, յերբ մենատնտեսը յեկավ կոտնտեսություն, կուլակը, յենթակուլակը, ոգտագործելով, չարաշահելով կոտնտեսականի՝ յերեկվա մենատնտեսի մանր-սեփականատիրական հոգեբանությունը, անում է ամեն ինչ, վորպեսզի քայքայի աշխատանքի դիսցիպլինան, սովորեցնի աշխատել վոչ թե իրը և տնտեսության համար, այլ ոտար տնտեսության, սովորեցնի աշխատել քիչ, աշխատել վատ: Յերբ դուք դիտում եք կոտնտեսականի ագարակը, աչքի յե ընկնում այն, վոր նրա անձնական բանջարանոցը հիանալի կերպով է մշակված, իսկ կոտնտեսային դաշտերը հաճախ այլանդակ դրության մեջ են»:

Կոտնտեսության մեջ Սավոլչենկոյի ամբողջ վարքագիծն այն հետևանքն էր ունենում, վոր կոտնտեսային դաշտերն այլանդակ դրության էլին հասնում, Կուբանի հողը ծածկվում էր վալրի բույսերով, մարդու հասակի բարձրությամբ մոլախոտերով:

Ամառվա ընթացքում Սավոլչենկոն վաստակեց միայն 15 աշխուր: Սակայն նա հպարտանում է հարվածայինի պատվավոր կոչումով, վորը նրան պարգևել են դարնանացանի ժամանակ: Աշխարհույնը ցույց է տալիս, վոր 1932 թվի գարնանը Նիկիտան յերեք շաբաթվա ընթացքում հանկարծ վաստակել է... 125 աշխուր:

Ի՞նչու: Վո՞րտեղից:

Գործը քննեցին: Պարզվեց, վոր աշխուրերը գրանցվել են վարի համար: Գարնանը Նիկիտան փայլում էր հարվածայինների պատվավոր տախտակի վրա, նա յեքեք անդամ ավելի գերակատարում էր նորման: Նրա աշխատանքի արդյունքները պարզվեցին աշնանը. դաշտում, վորտեղ մնացել էլին համատարած խամ տեղեր, վորտեղ ամբողջ միջին մասն անձեռմխելի յեր մնացել, իհարկե հաց չբուսավ:

Այսպես եր աշխատում թքով կպցրած կոտնտեսական Նիկիտա Սավոլչենկոն Նովո-Ռոժդեստովենակի՝ Համառուսական Կենտգործկոմի անվան գյուղատնտեսական արտելում: Այսպես պղծեց նա Կուբանի սևահողը—խորհրդային յերկրի լավագույն հողը: Այսպես խալտառակեց նա Կուբանը, վորը պետք է դառնա սոցալիստական յերկրագործության ծաղկած յերկիր:

Մատնանշելով, վոր Կուբանի կոլտնտեսականների մի վորոշ մասը կամ բոլորովին չի աշխատում, կամ անբարեխիղճ է աշխատում, ընկ. Շեբոլդակեր հարցնում էր.—

«Մի՞թե պարզ չէ, վոր կոլտնտեսականի բարեխիղճ և արգասավոր աշխատանքի հարցը—դա դասակարգային կատարի պայքարի մի ճակատամասն է, վորտեղ կուլակը վորձնում է կազմակերպել սարսուռ, կոլտնտեսային շինարարության վիժում»:

Լեռ, անդարձ գնացել են այն որերը, յերբ ստանիցաներում կուլակությունը բոլորովին էր թափ տալիս, ծեծում ու սպանում էր կոմունիստ ղեկավարներին, իշխանության ներկայացուցիչներին, անկուսակցական ակախիկին: Վորքան էլ կուլակությունը կաշուց դուրս չէկավ, նրա հաշիվները հողա ցնդեցին: Տերորիստական ակտերը առաջ բերին աշխատավորների ակտիվության նոր թափ, նրանց ավելի սեղմ համախմբեցին կուսակցության ու խորհրդային իշխանության շուրջը: Սա առանձնապես ցայտուն կերպով դրսևորվեց Նովո-Պոկրովսկայա ստանիցայում: Այնտեղ կուլակները և նրանց վարձակալները ծեծեցին յերկու տրակտորիստների: Ընդհանուր ժողովը դրան պատասխանեց վոչ միայն բանաձևով, այլ և մասսայորեն կոլտնտեսություն մտնելով: Այն որերում, 1929 թվին, մեծ բեկման տարում, յերբ Կուբանում անտեսությունների կեսից ավելին մտավ կոլտնտեսություն, կուլակությունը հասկացավ, վոր ճակատ առ ճակատ հարձակվելուց բան չի դուրս գա, վոր ուղղակի գրոհով կոլտնտեսային բերդը չես գրավի:

Հարկավոր էր նոր տակտիկա: Յեվ կուլակը պայքար մղեց վոչ միայն դրսից, ինչպես առաջ, այլ և ներսից:

1929 թվին կուլակ Իվան Սարակին Նովո-Ռոստովում նսկի ստանիցայից վորպես ագիտատորի, քսորեցին Հյուսիսային յերկրամաս: Նա ամեն կերպ աշխատում էր վախեցնել չքավորներին ու միջակներին, չլիզնել, վոր նրանք

տարեղ մտնեն: Հեռավոր հեմայից Սարակը գիշակերի սուր աչքով հետևում էր Նովո-Ռոստովի նսկի ղեկավարին: Չնայելով հեռու ասարածության, Սպիտակ ծովի ձյունապատ տունդրաներից նա փորձում էր ղեկավարել ստանիցայում կատարվող դեպքերը, վերջիններս յենթարկել իր կուլակային կամքին:

Ստանիցայում թագնված կուլակներին և ստիտակ-զվարդիականներին քսորավայրից դրած իր նամակներում նա մանրամասն բացատրում էր, թե ինչո՞ւմ պիտի կայանա կոլտնտեսությունների դեմ, կուսակցության ու կառավարության դեմ նոր պայքար մղելու տակտիկան:

Ահա Սարակի այդպիսի նամակներից մեկը, վորը պարունակում է գործողությունների մի ամբողջ ծրագիր, այն էլ վոչ միայն մեկ տարվա համար. «հիշեցնում եմ նաև, Տրոֆիմիչ, վոր դու չպետք է դեմ դուրս գաս ժողովներում, յես դրան հավանություն չեմ տալիս: Վորքան շատ դեմ խռատ, այնքան շատ կլինի նրանց հավատը դեպի կոլտնտեսությունը: Նրանք մեղ չեն սիրում: Իսկ յիթե այդ չափերում պատասխանել սիրելով և նրանց էլ մղել կոլտնտեսություն մտնելու, ինքներդ էլ այնտեղ համախմբվելով: Այն ժամանակ գործն ինքը ցույց կտա արդյունքը: Իշխանության համար էլ քաղցը չեն լինի այդպիսի կոլտնտեսությունները, հենց վոր նրանք հաց չտան: Ամբողջ հավատն էլ կհքանա: Ինչ վերաբերվում է Անդրեյկին, ասա նրան, վոր կոլտնտեսության տղաներից իրեն հեռու չպահի—եղ էչ լավ կլինի մեղ համար»:

Աքսորված կուլակ Սարակը ստանիցայում թագնված կուլակ Մաշտեգայի առաջ գործնական խնդիր դրեց—տիրել կոլտնտեսության հրամայական բարձունքներին, իր ձեռքն առնել ղեկավարությունը, այլասերել կոլտնտեսությունը, սոցիալիստական կազմակերպությունից վերածել կապիտալիստական կազմակերպության, պրոլետարական պետությունից առանձնացած, կազմակերպել կուլակային սարսուռ:

Սարակը շատ լավ եր հասկանում, վոր յեթե, որինազ, նիկիրտա Սափոչենկոն ստորագրել է կոլտնտեսություն մտնելու վերաբերյալ հայտարարության տակ, դրանով նա դեռ ևս նոր, սոցիալիստական մարդ չի դառել:

Տիմաֆեյ Մաշտեգան շատ լավ եր հասկանում, վոր յեթե նիկիրտային հանձնարարվի հացահատիկն ելեվատոր տանել է ճանապարհին ել ակնարկվի, վոր նրանց վոչ վոք չի տեսնում, իսկ հացահատիկը կշռված չե, նա դեմ չի կանգնի, իր անձնական ոգուտը և մանր-սեփականատիրական շտեղ ավելի բարձր կդասե կոլտնտեսության ու պետության շահերից և մի պարկ ցորեն կտանի դեպի թփերը:

Կուլակ Սարակի գործողություններն նոր ծրագիրը առաջարկում եր բոլոր բարեհույս մարդկանց «կոլտնտեսության մեջ ստեղծել քայքայվող, հակախորհրդային դրություն, ձևանալով կոլտնտեսականների «բարեկամներ», առանձին տարրերի շահերը ամբողջ կոլտնտեսային մասնայի շահերին գիտակցորեն հակադրելու համար, ճարպիկ խաղով, մանր սեփականատիրական տրամադրությունները գրգռելով, նրանց անկայուն մասին դրդել հափշտակելու կոլտնտեսային գույքը և դրանով կազմակերպելով գողությունը կոլտնտեսություններում, սարսուռի յենթարկելով, հացամթերումները և այլ պետական առաջադրությունները կոլտնտեսության կարիքները բավարարված չլինելու պատրվակի տակ նրա ապարտի մեջ խցկել «իրենց» մարդկանց իրեն հաշվետարներ և այլն, կոլտնտեսության դադարի վարկարեկելու նպատակով ամեն կերպ ուռցնել առանձին, ավելի թույլ, բայց խորհրդային իշխանությունը հավատարիմ կոլտնտեսային ղեկավարների աշխատանքի թերությունները» (ԽՍՀՄ-ի Ժողովրդների նախագահ ընկ. Մոլոտովի 1932 թվի նոյեմբերի 26-ի ճառից):

Ըստ այս ծրագրի, ինչպես ասում եր ընկ. Ստալինը «գյուղի աշխատանքի մասին» իր ճառում, բոլոր չմերկացված ու չջախջախված հակախորհրդային տարրերը պետք է հաճույքով մտնելին կոլտնտեսությունը և նույնիսկ գո-

վարանելին կոլտնտեսությունները, վորպեսզի սրանց ներսում ստեղծվեր հակահեղափոխական աշխատանքի բույն և վորպեսզի նրանք ոգտագործվելին իրեն բացահայտ թագաւոց րնդհատակյա կազմակերպությունների համար»:

ՎԵՐՋՆԱԿԱՆԱՊԵՍ ԶԶԱԽԶԱԽՎԱԾ ԿՈՒԼԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՆԳԱՐՈՒՄ Ե ՆՈՐ, ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ ԿԱՌՈՒՑԵԼՈՒՆ

Հի(բ) և Կենտրոնական Կոմիտեի քարտուղար ընկ. Կադանովիչը շատ սուր կերպով ասաց, վոր Կուլանի հակահեղափոխությունը տանուլ տալու խաղ խաղաց խորհրդային իշխանություն հետ:

Հակահեղափոխությունը միջոցներ ձեռք առավ, վոր պահպանի իր կադրերը, կուտակե իր ուժերը: Նախկին Պրետավսկայա ստանիցայի (Սլավյանսկու ռայոն) ատաման Ումեչենկոն, վորն արտասահման եր փախել, իր ոգնականների կտակեց՝ «առաջմ հաշտվեցեք, իսկ հետո կխփենք»:

Կուլակությունը, սպիտակ-գվարդիականները և այլ հակախորհրդային տարրերը իսկապես վոր թագուտներ մտան, ծակերի մեջ խցկվեցին, վորպեսզի խանդարեն Կուլանի աշխատավոր գյուղացիության նոր, սոցիալիստական կյանք կառուցելը, վորպեսզի նրանց առջև վարկարեկեն կոլտնտեսությունները, վերականգնեն կուլակների նախկին՝ շահագործելու իրավունքները:

Կուլանի կոլտնտեսություններում կան շատ այնպիսիները, վորոնք այնտեղ ծվարել են, վորպեսզի ազատվեն ապակուլակացումից և աքսորից: Կուլակ Տիմաֆեյ Մաշտեգան, վորը շարունակ բատրակներ և աշխատեցրել, ունեցել և իր կալիչը, 6 ձի, մինչև վերջին ժամանակներս թագնվել եր Նովոբոգոստովինսկու կոլտնտեսության մեջ (Համառ. Կենտգործկոմի անվան), Մարյանսկայա ստանիցայում, «Ռեվոլյուցիոնադա» կոլտնտեսության մեջ մեքենա-վար և յեղել Բորուս Ստեփանը, — խորունկի, ունեցել է կալ-

սիչ մեքենա: Հինգերորդ բրիգադում գործ եր տեսնում նախկին կուլակուհի, աքսորից ճողոպրած Լիանդուն: Այս որինակները յեղակի չեն:

Կոլտնտեսություն խցկված կուլակությունը ամենից առաջ աշխատում եր վախեցնել, իր ազդեցության յենթարկել, հլու դարձնել չքավոր ու միջակ կոլտնտեսականներին:

Կուլակ Տիմաֆեյ Մաշտեգան, հաջողեցնելով համառուսական Կենսագործկոմի անվան կոլտնտեսության տնտեսի պաշտոնը, մի անգամ այսպիսի խոսակցություն ունեցավ շաբաթյին կոլտնտեսական Նիկիտա Սավոչենկոյի հետ.

— Դու կազակ ես, չպետք է ոգնես կոլտնտեսության: Մերոնք կդան, կզրկեն քեզ կազակի կոչումից, կաքսորեն ստանիցայից:

— Մի վախենաք, քեռի Տիմոխա, յես ենպես, ելիս ենք քան ել լավ չեմ աշխատում: Կոլտնտեսությունն ինձանից քիչ ոգուտ է ստանում: Յես մեքենայից եմ:

Այս խոսակցությունը տեղի ունեցավ ճանապարհին, երբ նրանք միասին Կոլտնտեսության հացահատիկը տանում էյին երկվատոր, յերբ նրանք, Մաշտեգի առաջարկությամբ, թփերի մեջ թողին 3 պարկ գոլացված ցորեն:

Նիկիտա Սավոչենկոյի պես կուլակին պատասխանում էյին նաև մյուս կոլտնտեսականները: Նրանք ես «ենպես, ելիս» էյին աշխատում: Իդուր չե, վոր 1932 թ. գարնանը Սավոչենկոն չեր վարում, այլ միայն քչիորում եր Կուբանի հողը, աշխատելով չքանդել հողաշերտը, թողնելով խոպան տեղեր:

Իդուր չե, վոր Հյուսիսային Կովկասի կոլտնտեսությունների գործնական կյանքում, մանավանդ Կուբանում, չափազանց հաճախ են հանդիպում այժպիսի փաստեր:

Նովո-Ռոստովի մարզի ստանիցայում, Համառուսական Կենսագործկոմի անվան կոլտնտեսության մեջ 207 աշխատունակներից աշխատանքի յեր դուրս դալիս միայն 6% մարդ, «Կրասնի Կուբանից» կոլտնտեսության մեջ 484 աշ

խատունակներից աշխատանքի յեր յնկում 100-ից վոչ ավելի մարդ: Սակայն սրանք ել աշխատանքի էյին գնում միայն աչքի թող փչելու համար: Աշնանը, յերբ կոլտնտեսություններն արդեն պիտի վերջացնէյին բոլոր աշխատանքները, Համառ. Կենսագործկոմի անվան կոլտնտեսությունը, վորտեղ գործում էյին Մաշտեգոյի նման կուլակներ, իր առաջագործյունների կեսն անգամ չկատարեց: Այնտեղ 700 հեկտարի փոխարեն վարեցին միայն 70 հեկտար, այսինքն 10 անգամ պակաս, ցանեցին առաջագործյունից 4 անգամ պակաս և այլն: Կոլտնտեսականները, ամուր սանձված լինելով կուլակի կողմից, աշխատանքի էյին գնում առանց շտապելու: Դաշտում այստեղ ու այնտեղ նստոտում էյին խումբ-խումբ կանայք, տղամարդիկ: Դանդաղ շարժվում էյին ճակնդեղով բեռնված սայլերը: Յեթե ճակնդեղը թափվում եր սայլից, սայլավորները դրա վրա վոչ մի ուշադրություն չէյին դարձնում:

Վորքան ուժեղ է սոցիալիզմի հարձակումը, այնքան կատարի կերպով են դիմադրում շահագործողների վերջին մնացորդները: Ճկուն թշնամին փնտռում է ամեն տեսակ ձևեր՝ կոլտնտեսությունները քայքայելու և վարկարեկելու համար:

Աշխատելով վիժեցնել կոլտնտեսային դաշտերի բերքատվության համար մղվող պայքարը, կուլակը վոչ միայն սովորեցնում է վատ աշխատել, այլ և պայքարում է կոլտնտեսություններում ագրոգիտության և գյուղատնտեսական տեխնիկայի նվաճումների գործադրության դեմ:

Բերքատվության բարձրացման ճիշտ միջոցը ցանքաշրջանառությունն է, կուլտուրաների կանոնավոր հերթափոխությունը, հողի հարստացումն այդ միջոցով: Յեվ կուլակությունն աշխատում է խանգարել ցանքաշրջանառություն մտցնելը:

Պողխորոնժի Շչեբբակովը, վորն աշխատում եր Պոյա-նոգոլսկու կոլտնտեսության մեջ իբրև դաշտավար և այնտեղ խցկվել եր իբրև «մասնագետ», բոլորովին փչացրեց

700 հեկտար վարսակն ու 200 հեկտար բամբակը: Սակայն այս դեռ բոլորը չէ: Նա այնպես արեց, վոր կոլտնտեսությունը չափազանց ցածր բերք ստացավ—ցորենի մի հեկտարից—6 ցենտներ, վարսակի—8,2 ցենտներ:

Այդ տեղի ունեցավ այն պատճառով, վոր Շչերբակովը դաշտերը բաժանեց մասերի, և այնպես, վոր մի քանի տարիների ընթացքում միլենուլյն կուլտուրան ցանվում եր միլենուլյն տեղում: 1931 թվին վարսակը ցանեցին 40 տեղ, 1932 թվին—73 տեղ: Վարսակով ցանված դաշտերը շատ ել նման չէին համատարած ցանքի, այլ ավելի շուտ հիշեցնում էին հին, մենատնտեսական արտերը: Բազմաթիվ սահմանները կտրատում էին համատարած դաշտերը, իսկ այդ սահմանների պատճառով արտերը ծածկվում էին մոլախոտերով: Կոլտնտեսությունն ուներ նույնիսկ 5—10 հեկտար տարածություն միատեսակ ցանքեր, վորոնք զբաղվում էին զանազան տեղերում: Յերբ հարկավոր եր լինում կատարել մի վորեն կուլտուրայի բերքահավաք, պետք եր հաճախակի տեղափոխել մեքենաները մի տեղից մի այլ տեղ: Այս հաճախակի տեղափոխությունները ձգձգու էին բերքահավաքը:

Վարսակով բռնված ամենախոշոր հողամասը 158 հեկտար եր: Յեմ այս հողամասի վրա վարսակը ցանում էին յերեք տարի անընդատ. վերջը քայքայեցին հողամասը, համարյա անպտուղ դարձրին: Յեթե 1929 թվականին այդ հողից հավաքում էին ավելի քան 29 ցենտներ վարսակ, ապա 1930 թվին հավաքեցին 18, 1931 թ.—14, իսկ 1932 թ.—8,2 ցենտներ: Ահա թե ինչ արդյունք տվեց կուլակային ցանքաշրջանառությունը:

Պոյանոգուսկի կոլտնտեսությունը շարունակ ուշանում եր բամբակի քաղհանը և այնտեղ դրանից փչացավ 200 հեկտար: Ուշացումների պատճառներից մեկն այն եր, վոր բամբակի դաշտերը հեռու էին ստանիցայից: Բամբակը շատ աշխատանք պահանջող կուլտուրա յե, նրան ամառվա ընթացքում պետք ե քաղհանել յերեք անգամ: Հաճախ ան-

հրաժեշտ և լինում, վոր քաղհանի համար դուրս գան բոլոր աշխատունակ կոլտնտեսականները, նաև տանտիկինները: Այդ հեշտությունը կարելի յե անել, յերբ բամբակի դաշտերը գտնվում են ստանիցայի մոտ: Պողխորոնժի Շչերբակովը հիանալի կերպով հաշվի առավ այս հանգամանքը և աշխատեց բամբակին հատկացնել ամենահեռավոր դաշտերն ու փչացնել այն:

Կոլտնտեսականի վրա շարունակ ճնշում են գործ դնում գաղտագողի ուժերը, ճնշում ե մանր-սեփականատիրական հողերանությունը: Այդ ուժերը ձեռնտու յեն կուլակին: Բավական չե, վոր կուլակը քայքայում ե աշխատանքային դիսցիպլինան, սովորեցնում ե քիչ և վատ աշխատել, նա կազմակերպում ե նաև բերքի հափշտակումը, ամենաառաջավոր, իսկապես գիտակից կոլտնտեսականների հարվածային աշխատանքով ստեղծվածի հափշտակությունը:

1932 թվին կոլտնտեսային հացի հափշտակությունը հրակայական չափերի հասավ: Վոչ միայն հարյուրավոր հետաձնաց, կուլակի կողմից սանձված կոլտնտեսականներ, ինչպիսին ե Նիկիտա Սավիչենկոն, գողանում էին կոլտնտեսային հացը, հեռանալով դաշտից, ելելատոր գնալիս, գիշերը և այլն: Հանրահայտի յե գնդակահարված Կոտովի, Ուտրադենի կոլտնտեսության նախագահի գործը, Կոտովի, վոր կոլտնտեսության մեջ կազմակերպեց կուլակային խմբակ, գաղտնի կերպով և առանց ստորագրությունների կրեկնակի ավանս բաժանեց, հայտարարելով գիշերային խորհրդակցություններում, վոր կգնդակահարի նրան, ով վոր բանա հացի հափշտակման գաղտնիքը:

Ընկ. Շերոլաևը վերև հիշված իր ճառում ասում ե.—«Ձե՞ վոր յերբ հացը գյուղացիության անձնական մասնավոր սեփականությունն եր, յերբ ամբողջ գույքը հանդիսանում եր անձնական սեփականություն, գողությունը համարվում եր մեծագույն հանցանք: Այդ մասնավոր սեփականության պահապան էին կանգնած թե պետությունը, և թե հասարակական կարծիքը: Յու-

րաքանչյուր գող համարվում էր ամենաարհամարելի արարածը, վորը պատժվում էր բուրժուական որենքների բոլոր խստությամբ։ Մենատնտեսը մեղք էր համարում, հանցանք էր համարում հաց գողանալը, ուրիշի ունեցվածքը վերցնելը։ Իսկ այժմ, յերբ այդ սեփականութիւնը դարձավ հասարակական, կոլտնտեսային, նա թքել է նրա վրա։ Ընդհակառակը, կուլակը կարողացավ այնպես նպաստել այդ մանր-սեփականատիրական տրամադրութիւնների զրսելնորվելուն, վոր հափշտակութիւնը դարձավ վոչ միայն մասսայական յերևույթ, այլ և գրեթե տարերային գործ։ Կոլտնտեսութիւնների մասսայում մինք չենք հանդիպում դիմադրութեան՝ այդ յերևույթին։ Կոլտնտեսականը, վերադառնալով դաշտից, վերցնում է քառորդ պարկ յեզիպտացորեն կամ վորոշ քանակութեամբ ցորեն և սա նույնիսկ չի համարում հանցանք։ Իսկ չե՞ վոր սա կոլտնտեսութեան անկման ճանապարհն է։

Այսպիսով կուլակութիւնը, քայքայելով աշխատանքի գիտելիքներն, վիժեցնելով ագրոտեխնիկայի համար մղվող պայքարը, կազմակերպելով կոլտնտեսային ինչքի հափշտակութիւնը, փորձում է անկման հասցնել կոլտնտեսութիւնները։ Այսպես նա աշխատում է խանգարել Հյուսիսային Կովկասի, մասնավորապես Կուբանի աշխատավոր դյուղացիներին՝ կառուցել սոցիալիստական նոր կյանք, Կուբանը դարձնել սոցիալիստական յերկրագործութեան ծագկած յերկիր։

ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԴԱՇՏՈՒՄ ԱՇԽԱՏԵԼՆ ԱՎԵԼԻ ԼԱՎ Ե

Առաջ, յերբ Նիկիտա Սափոջիկուն դեռ անհատ տնտեսատեր էր, նա ստիպված էր բերքի մեկ յերրորդը տալ կուլակին՝ հնձելով ու կախելով ողովելու համար։ Մի յերրորդըն էլ տալիս էր աղորիքին՝ աղալու համար։ Զբաղորներն ու միջակները կերակրում էին կուլակային մակարույծնե-

րին։ Կուլակութիւնը, տիրելով արտադրութեան հիմնական միջոցներին, ինչպես ուզում, այնպես էլ բաժանում էր մենատնտեսների բերքը։ Չնայելով, վոր մասնավոր սեփականութիւնը հայտարարվում էր սրբադան և անխախտելի, կուլակները խլում էին դա աշխատավոր դյուղացիներից։

Այժմ արտադրութեան բոլոր միջոցները հանդիսանում են պետութեան սեփականութիւն, ուրեմն և բոլոր աշխատավորների սեփականութիւն։ Կոլտնտեսութիւնները տիրացել են կուլակութիւնից գրաված մեքենաներին։ Կուլակներն այլևս չեն բաժանում բերքը, վորն արդիւնք է կոլտնտեսականների աշխատանքի։ Կոլտնտեսութեան բոլոր յեկամուտները բաժանվում են կոլտնտեսականների միջև, ըստ նրանց աշխատանքի քանակի և վորակի։ Միայն այժմ, պրոլետարիատի գիկտատուերայի պայմաններում, յերբ վոշրենացված է արտադրութեան միջոցների մասնավոր սեփականութիւնը, յերբ հիմնականում վերացված են շահագործող դասակարգերի վերջին մնացորդները, կոլտնտեսականի բարեկեցութիւնը կախված է նրանից, թե վորքան ուժեղ է խորհրդների յերկիրը, վորչափ ամրապնդված են նրա կոլտնտեսութիւնները։ Յեթե կոլտնտեսութեան մեջ բարձր բերք է ստացվում, դաշտերը լավ են մշակվում, ապա բարձր կլինի նաև կոլտնտեսականի յեկամուտը, նրա նյութական-կուլտուրական մակարդակը։

Կուլակութիւնը կազմակերպում է կոլտնտեսային գույքի հափշտակութիւնը։ Իսկապես գիտակից և անձնվեր կոլտնտեսականների մի մասը, ինչպես ասում էր ընկեր Շերոբդակը, «իրոք վոր քարեխիղճ է աշխատում, ամբողջ ժամանակ գտնվում է դաշտում, աշխատանքի վրա, վաստակում է աշխուրբ, հարյուրավոր աշխուրբ, իսկ գալով կոլտնտեսութիւն, հաց չի գտնում, վորովհետեւ ծուլը, յերբեմն կոլտնտեսականը, ավելի հաճախ անհատականը վոշինչ չանելով, զբաղվում էր հացի և յեզիպտացորենի հափշտակութեամբ և ապրում իր քեֆին»։ Գողը, սրիկան, վորը մնաս է հասցնում կոլտնտեսութեան, նույն մակարույծն է (պա-

ռազմաբան), ինչ վոր կուլակը: Նրանք իրենց հանցավոր գործողութիւններով պակասեցնում են կոլտնտեսութեան բերքը, իջեցնում են աշխարհա արժեքը, վատտակում են ի հաշիվ կոլտնտեսականի: Ահա թե ինչու բոլոր առաջավոր կոլտնտեսականները պետք է պայքար մղեն գողերի ու հափշտակիչների դեմ, դաժան, անխնայ պայքար:

Սակայն միմիայն կոլտնտեսութեան բարիքի ուղղակի հափշտակումները չեն, վորոնք քիչ քան են հասցնում կոլտնտեսութեան: Կոլտնտեսութեան յեկամուտը պակասում է նաև այն ժամանակ, յերբ վատ աշխատանքի հետեանքով փչանում են ցանքերը, ընկնում են ձիերը, ջարդվում են մեքենաները, անպետքանում է գյուղատնտեսական ինվենտարը:

Այս տեսակետից ցայտուն որինակներ են տալիս Նովո-Ռոստովի կոլտնտեսութեանները, վորոնց արդյունաբերական աշխատանքի բացակայութեան մասին գրվեց վերևում:

Ընթերցողն արդեն գիտե, վոր այնտեղ արդյունք չբացուցվեց 6 հազար հեկտար ամենաարգելանդ կուրանի հողից, վոր վոչ իր ժամանակին կատարված բերքահավաքի պատճառով այնտեղ փչացավ ցանքերի մեծ մասը, վոր այնտեղ չպահպանվեցին հացի հավաքման ժամկետերը, աշխատում էյին դանդաղ, անցկացրին ցորենի մոմի հասունութեան ժամանակը և բերքի կեսը թողին դաշտերում, վոր այնտեղ այնպիսի կոլտնտեսականներ, ինչպիսին է Նիկիտա Սավոլոջենկոն, վարելիս՝ համատարած խամ տեղեր էյին թողնում, «մի կերպ» էյին աշխատում:

Այս բոլորը հարվածում էր Նովո-Ռոստովի կոլտնտեսութեաններին: Սակայն հարվածը կոլտնտեսութեան՝ հարված է նաև կոլտնտեսականին: Կոլտնտեսականներն իրենք իրենց քիչ քան հասցրին, վատ աշխատելով կոլտնտեսութեան դաշտերում:

Կոլտնտեսականների վատ աշխատանքը իջեցնում էր աշխուրհի արժեքը: Յեթե Տիխոբրեցկու ռայոնի կոլտնտեսութեաններում աշխարհա միջին արժեքը 93 կոպեկ էր, ապա

Նովո-Ռոստովի կոլտնտեսականի կոլտնտեսականի կենտրոնական անվան կոլտնտեսութեան մեջ 33 կոպեկ էր—համարյա 3 անգամ պակաս:

Նովո-Ռոստովի կոլտնտեսականները յերեք անգամ պակաս ստացան, քան ավելի առաջավոր կոլտնտեսութեանների անդամները, վորոնք իրենց պլանը կատարում էյին ժամանակին, չեյին թողնում, վոր ցանքերը փչանան: Ահա անբարեխիղճ աշխատանքի տխուր արդյունքը: Ահա ամենացատուն ապացույցը, վոր կոլտնտեսութեան հասնող հարվածը հասնում է նաև կոլտնտեսականին:

Համառոտական կենտրոնական անվան կոլտնտեսութեան մեջ աշխարհա արժեքի, նրա յեկամտի թիվը ցույց է տալիս, թե ինչ էր ցանկանում կուլակ իվան Սարակը, ինչի յեր ձգտում կուլակ Տիմաֆեյ Մաշտեգան: Նրանք կոլտնտեսականներին սովորեցնում էյին աշխատել քիչ և վատ, դրդում էյին նրանց գողանալ կոլտնտեսութեան բերքը, վոր պեսզի պակասի աշխարհա արժեքը, պակասի կոլտնտեսականների նյութական բարեկեցութեանը և նրանց աչքու վարկարեկվի կոլտնտեսային շարժումը:

Սակայն առաջավոր կոլտնտեսութեանների գործնական կյանքում յեղած հարյուրավոր և հազարավոր փաստերը ասում են, վոր կոլեկտիվացման գաղափարը չի վարկարեկված թեկուզ մեկ միլիոներորդական մասով:

Վերջինք իբր ուրինակ, Միջին Վոլգայի Բեզենչուկի ռայոնի ՄՏԿ-նի մի խումբ կոլտնտեսութեաններ, վորոնց կազմակերպիչները վերջերս ընկ. Ստալինին գրեցին մի նամակ, վորտեղ մանրամասն պատմում են իրենց գործերից:

Բեզենչուկի կոլտնտեսականներն ամենից առաջ պատմում են այն մասին, թե ինչպիսի կարողացան բարձր բերք ստանալ.—

«Առաջ, մինչև համատարած կոլեկտիվացումը, մեր ռայոնը ամենալավ տարիներում միջին թվով տալիս էր մեկ հեկտարից վոչ ավելի, քան 5 ցենտներ բերք իսկ հիմի ցորենի միջին բերքն արդեն մի հեկտարից

8 ցեղաներ եւ Մենք այստեղ չենք խոսում մեր այնպիսի կոլտնտեսութեաններ ժամին, ինչպիսին են՝ ետքազվարչութեան անվան կոմունան, Լենինի անվան կոլտնտեսութեանը, «№ 2 դիզանո», Չապակի անվան կոլտնտեսութեանը, — վերաբերող ցորենի մի հեկտարից ստացվում է 11—12 ցեղաներ, հաճարի մի հեկտարից — 19—20 ցեղաներ»:

Նրանք ինչպիսի այդպիսի ապշեցուցիչ արդյունքներ ստացան:

Դրան մի պատասխան կա — աղնվորեն, բարեխղճաբար աշխատելով կոլտնտեսութեան դաշտերում, հողը խնամքով մշակելով, սիրով խնամելով ցանքերը, հողատար վերաբերվելով դեպի բերքը, բերքահավաքը կատարելով առանց կորուստների:

Կուսակցութեանը, զարգացնելով ծանր արդյունաբերութեանը, վերադիմաց, մեքենայացրեց կոլտնտեսութեանները: Դրա հետեանքով այժմ չկան լժկան չունեցողներ, այժմ կոլտնտեսականները կարող են թե աշխատավար կատարել, թե վաղ ցանք անել, այսինքն այն, վոր առաջ մատչելի չէր միայն կուլակին: Այդ հնարավոր դարձավ այն պատճառով, վոր, ինչպիսի և կուլանցիները, Բեզենչուկի կոլտնտեսականները դինվեցին մեքենայական տեխնիկայով: Յեզ Կուրանի ու Բեզենչուկի բերքատվութեան միջև տարբերութեան յեղով այն պատճառով, վոր կուլանցիք չողտազործեցին այդ մեքենայական ուժով, իսկ Բեզենչուկի կոլտնտեսականներն ոգտազործեցին ինչպիսի պետք է: Ամրապընդելով իրենց կոլտնտեսութեանները, նրանք լավ ոգտազործեցին մեքենաները՝ հողը խնամքով մշակելու, բերքը առանց կորստի հավաքելու համար:

Նրանք գործադրեցին նաև ագրոտեխնիկան — պահեցին ձյունը, վաղ ցանքը կատարեցին՝ դուրս սերմացույով, գործադրում էին յարովիկացիա և այլն: Առաջ չքավորին ու միջակին — անհատականին այդ մատչելի չէր, իսկ այժմ, կոլտնտեսութեան մեջ հնարավոր է կոլտնտեսականներն

ուրախութեամբ հայտնում են ընկ. Ստալինին, վոր նրանք «մոլախոտերն արդեն վոչնչացրել են, դաշտերում այլ ևս վոչ ուլաֆ կա և վոչ էլ դաշտային սեղ»:

Այսպիսի ամրապնդվեցին Բեզենչուկի կոլտնտեսութեանները: Վերևում արդեն ասվեց, վոր ինչքան ուժեղ լինի կոլտնտեսութեանն, այնքան լավ կապրի կոլտնտեսականը: Հենց այս բանն էլ հաստատվում է Բեզենչուկի կոլտնտեսութեանների որինակով:

Հիշելով, վոր այժմ, յերբ մեքենաներ կան, կոլտնտեսականները չեն չարչարվում աշխատանքի, ժամանակ, նրանք այսպիսի են պատմում իրենց յեկամուսների աճման մասին. —

«Յուրաքանչյուր բարեխիղճ աշխատող կոլտնտեսական, տարվա ընթացքում վաստակում է 300—350 աշխուր: Մեր կոլտնտեսութեաններում լավ աշխատողների մեկ աշխուրվան ընկնում է $3\frac{1}{4}$ կիլո հաց, միջակ աշխատողներին — 2,5 կիլո և վատ աշխատողներին — 2 կիլո: Այսպիսով դուրս է դալիս, վոր բարեխիղճ կոլտնտեսականը վաստակում է 6—7 ցեղաներից մինչև 10—12 ցեղաներ հաց: Վերցրեք այժմ մի ընտանիք, վորի յերկու յերեք անդամներն բարեխիղճ աշխատում են կոլտնտեսութեան մեջ: Այդպիսի ընտանիքն ուրեմն կստանա միջին թվով 120—130 փութ հաց:

Կարող են ասել, թե միջակն իր անտեսութեանից ավելի յեր ստանում: Այո, պատահում էր և ավելի, պատահում էր նաև, վոր վոչինչ չէր ստանում: Նա վստահ չէր իր վաղվան որվա համար: Բավական էր մի վորեւե անհաջողութեան և նա էլ չէր կարողանում վոտքի կանգներ: Իսկ կոլտնտեսութեան մեջ ուրիշ է բանը. նա գիտե, վոր այստեղ միայն մի հոգս կա — ինքը բարեխիղճ աշխատի և հաջողեցրու, վոր ուրիշներն էլ բարեխիղճ աշխատեն, այն ժամանակ քեզ հետ յերբեք և վոչ մի վատ բան չի պատահի»:

Սակայն միթե միայն Բեզենչուկում կան այդպիսի որինակելի կոլտնտեսութեանները: Միթե այդպիսիները չկան

Կուրանի կոլտնտեսությունների մեջ: Որինակելի կոլտնտեսություններին են մոտենում, որինակ, Տիխոբեցկու աշտոնի լայն կոլտնտեսությունները, վորոնք յերեք անգամ ավելի յեկամուտ են ստացել, քան Նովո-Ռոժդեստովենսկու Համառուսական Կենտրոնական կոլտնտեսությունը:

Այսօր որինակելի կոլտնտեսությունները հազար են, վաղը կլինեն տասը հազար:

Իրավացի յեն բեզենչուկցիները, վորոնց որինակին պետք է հետեւին Կուրանի և Հյուսիսային Կովկասի բոլոր կոլտնտեսականները, յերբ ասում են. «Արդեն մեր կոլտնտեսությունների կեսն աչապես ամուր է տանում գործը և աչապիսի որինակ և տալիս, վոր ամենակարճ ժամանակում հետաձնաց կոլտնտեսությունների գյուղացիները խելքի կզան»:

Կուրանի յուրաքանչյուր կոլտնտեսական պետք է խելքի գա: Ամեն վոր պետք է գիտնա և հասկանա, վոր կոլտնտեսությունը պատկանում է իրենց, կոլտնտեսականներին, վոր կոլտնտեսային դաշտն ոտար չեն: Դա Սարանսբի, Մաշտեգի, Պաշենկոյի դաշտը չեն, վորոնք հողերի և մեքենաների տերերն եյին և շահագործում եյին չքավորներին: Կոլտնտեսային դաշտերի յեկամուտները պատկանում են իրենց, կոլտնտեսականներին: Լավ է աշխատել իրենց կոլտնտեսային դաշտում իրենց համար—անա սապետք է լինի յուրաքանչյուր կոլտնտեսականի, բոլոր կոլտնտեսային մասսաների պատվի գործը:

ՅՈՒՐԱՔԱՆՁՅՈՒՐ ԿՈՆՏՏԵՍԱԿԱՆ ՊԵՏՔ Ե ԼԻՆԻ ԳԱՐՆԱՆՑԱՆԻ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ

Մտենում է յերկրորդ հնգամյակի առաջին բուլշևիկյան ցանքսը: Այնպիսի մի ցանքս, վորի ժամանակ բոլոր կոլտնտեսությունները սերմերով պետք է ծածկեն այն բոլոր հողերը, վոր նրանք պակաս ցանեցին 1932 թվի աշնանը:

Մտենում է կոլտնտեսությունների լարված և շտապ աշխատանքի ժամանակաշրջանը, աշխատանք, վորի ընթացքում յուրաքանչյուր կոլտնտեսական պետք է ապացուցի, վոր ինքը միացած չե կուլակների հետ, վոր ինքը դեմ է պորտաբույծներին, միասարսերներին, շահագործողներին, վոր իր կոլտնտեսային դաշտում, զինված լինելով առաջավոր գյուղատնտեսական տեխնիկայով և գիտելիքներով, նա շատ ավելի լավ և արդյունավետ կաշխատի, քան աշխատում եր մի ժամանակ, յերբ ինքը միանալիս եր:

Բոլոր կոլտնտեսությունների և յուրաքանչյուր առանձին կոլտնտեսականի առաջնակարգ խնդիրն է—ապահովել իր դաշտերը սերմացուներով: Կուլակցությունն ու կառավարությունը վորոշել են, վոր կառավարությունը կոլտնտեսություններին սերմացու չի տալու և վոր սերմացվի փոխառություն չի լինելու:

Յեւ վոչ մի բուլե չի կարելի խոսել այն մասին, վոր կոլտնտեսություններին սերմացու չի բավականանում, վոր սերմացվի անբավարար լինելու պատճառով ցանքսը կիսատ է կատարվելու և այլն: Այս խոսակցությունները զուր ժամանակ են վատնում, իսկ ամեն մի կորցրած ուր, վորը չի ոգտագործված ցանքսի պայքարի համար, հարված է հասցնում կոլտնտեսականին, կոլտնտեսության և յերկրին, ուրախացնում է թաղնված կուլակին և սպիտակ-գվարդիականին:

Առաջավոր կոլտնտեսականներն արդեն գտնում են սերմացու: Տեմիրգոյեվսկայա ստանիցայում —վորտեղ կուլակությունը կազմակերպել եր ուժեղ սարքոտած բոլոր ասպարեղներում և վորն սկզբում սե տախտակին եր հանված, բայց կուլակցության Յերկրային Կոմիտեյի ղեկավարությամբ խորտակեց սարքոտածը,—այնտեղ հաջողությամբ աշխատում են լավագույն կոլտնտեսականներից կազմված ինքնաստուգման բրիգադները: Նրանք բաց են անում կուլակների հորերը, հավաքում են այն հացահատիկը, վորը կամ գողացված է, ծախված, կամ ստացված է կրկ-

նաև ի կանխավճարի կարգով և այլն: Յուրաքանչյուր կորստնոսականի շահը պահանջում է ոգնել ինքնաստուգման բրիգադներին՝ զողացված հացը թաղցնողների դեմ պայքարելու գործում:

Համկոմիտեի (բ) Կենտրոնական Կոմիտեն և ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիտեների խորհուրդը, հսկայական նշանակություն տալով ցանքսին ժամանակին նախապատրաստելուն Հյուսիսային Կովկասում, վերտեղ հատկապես ուժեղ և թշնամու դիմադրությունը, զարնանացանի վերաբերյալ հատուկ ցուցումներ արին Հյուսիսային Կովկասին: Կուսակցությունն ու կառավարությունն այսպես վերոշեցին.

1. Անցկացնել գաշտերի համատարած մաքրումը մոլախոտերից՝ ալրելու և այլ մեթոդների միջոցով: Ռայզորդ-կոմներին իրավունք տալ պարտադիր աշխատանքի կարգով մոբիլիզացիայի յենթարկել գյուղացի ազգաբնակչության վաղահաս հասկավոր մշակութային համար հատկացնել այն հողերը, վերոնք աշնանն են հերկված, հատկացնել ավելի մաքուր հողերը, մոլախոտերով աղտոտված հողերը մշակել անպայման կորպուսավոր գույքաններով:

2. Սահմանել Հյուսիսային Կովկասի համար 8250 հազար հեկտար զարնանացանի պլան՝ ըստ խորհտնոսությունների, կոլտնտեսությունների և անհատական հատվածի. այդ 8250 հազար հեկտարից ցորենը լինելու յե 2050 հեկտար, գարին—900, վարսակը—350, յեզիպտացորենը և սորգոն—1450 և արեածաղիկը—1050 հազար հեկտար:

3. Անհատիկ ցեղերը 1,2 միլիոն հեկտարի չափ, վորից 600 հազար հեկտարը վարելու յեն կոլտնտեսությունները, այն հաշվով, վոր ցեղերի համար առանձնացվեն ամենաաղտոտված հողերը. ցեղերի մշակումն սկսել վաղացան զարնանաբույսերի ցանքան ավարտելուց անմիջապես հետո և ավարտել վոչ ուշ քան հուլիսի 5-ին:

4. Սերմացվի համար լրիվ հավաքել 2255 հազար ցենտներ ցորեն, 455 ցենտներ վարսակ, 1080 հազար ցենտներ գարի, 435 հազար ցենտներ յեզիպտացորեն:

5. Սերմահավաքումն ավարտել փետրվարի 15-ին, անհրաժեշտություն դեպքում իրականացնելով այն՝ հացամթերումն անցկացնելու կարգով: Բոլոր սերմացուներն ավտահանել և խնամքով պահպանել Հյուսիսային Կովկասում մի հեկտարի համար սահմանել սերմացանի հետեվյալ պարտադիր նորման. զարնանացորեն—1,1 զարնանացան գարի—1,2 և վարսակ—1,3 ցենտներ:

6. Գարնանացանի բոլոր նախապատրաստական աշխատանքները—բրիգադների կազմակերպումը, նրանց հողամասերին ամրացնելը, ցանքաշարժանառություն դաշտերի սահմանումը, մեքենաների նորոգումը և այլն—ավարտել մարտի 1-ին:

Սերմացվի հավաքմանը վերաբերող 5-րդ կետում Կենտկոմը և Ժողկոմխորհը հատկապես ընդգրկում են, վոր համոզելու մեթոդներին զուգընթաց, պետք է կիրառել նաև ստիպողական մեթոդ. անհրաժեշտություն դեպքում սերմացուն հավաքել հացամթերումների անցկացնելու կարգով:

Այս տարի հարկի կարգով կոլտնտեսությունները և անհատական տնտեսությունները պետություն տալու յեն վորոշ քանակությամբ հացահատիկ:

Հյուսիսային Կովկասի այն բոլոր կոլտնտեսությունները, վորոնք չեն սպասարկվում մեքենատրակտորային կայանների կողմից, 1933 թվին փաստորեն ցանված աշնանաբույսերի ամեն մի հեկտարից և զարնանացան բույսերի սահմանված պլանի ամեն մի հեկտարից պետք է տան 2,5 ցենտներ, իսկ մեքենատրակտորային կայանների կողմից սպասարկվող կոլտնտեսությունները—2,1 ցենտներ:

Այս հեկտարային նորմաները չեն բարձրացվելու: Արգելված են նաև հանդիպական պլանները:

Սրանից հետեվում է, վոր յիժե կոլտնտեսությունները մացան հավաքի, հողը լավ նախապատրաստի, առատ աճեցնի, ապա նրա տրամադրության տակ մնալու յեն բոլոր մնացորդները՝ հացը պետություն հանձնելուց հետո: Հնարավոր կլինի լայն չափով ծավալելու կոլտնտեսային առև-

տառերը, լիովին ապահովել կոլտնտեսականներին մթերքների, լավացնել նրանց բարեկեցությունը:

Վերելում մենք ասացինք, վոր իր ազարակում Նիկիտա Մալոշչենկոն 1 հեկտարից ստացել է 17 ցեխտներ: Յեթե կոլտնտեսականները կարողանան կոլտնտեսային դաշտերից հավաքել այսպիսի առատ բերք, իսկ պետությունը հանձնեն 2.5 կամ 2,1 ցեխտներ նորման, ապա նրանց տրամադրության տակ կմնա քանակությամբ հացահատիկի ավելցուկներ:

Իսկ յեթե կոլտնտեսություններն այս բանը չանեն, յեթե կոլտնտեսականները չհոգան սերմացվի, ցանքսի մասին, ապա թող հանդիմանեն իրենց: Թող բոլորը հիշեն ընկ. Շերոլզակի այն խոսքերը, վոր նա ասել է Համկոմկուսի (Բ) Յերկրկոմի և Յերկրային Վերաստուգիչ հանձնաժողովի միացիալ պլենումում 1933 թվի հունվարի 26-ին:

«Յեթե դուք հույս ունեք, վոր սերմացուն կարող է պետությունը տալ, ապա դուք սխալվում եք: Մեր յերկրում հացը հաղիվ հաղ է բավարարում, մի քանի յերկրամասեր և կազմակերպություններ խաբեցին, դրանց թվում նաև մենք: Սերմացու մենք չենք տալու, ապա ուրեմն ստիպված ենք ինքներս ցանելու, մենք պետք է լրացնենք այն, ինչ վոր կորցրել ենք: Իսկ յեթե կոլտնտեսությունները չցանեն, այն ժամանակ թող անցնեն դպրոց, անտոգո, ծանր դպրոց, փորձով համոզվեն, թե ինչ հետևի անքններ կուռնեիս ցանքսի սաքոտաժը: Մենք արդյունաբերության համար, պետության համար հացը կվերցնենք հաբկի կարգով, և թող այն ժամանակ կոլտնտեսականները համոզվեն, վոր կոլտնտեսությանը ձեռնառու յե լրիվ ցանել և լավ հավաքել բերքը, և վոր բացի կուռակցության և խորհրդային իշխանության ցույց տված ճանապարհից, կոլտնտեսություն ուրիշ ճանապարհ չունի: Այն ժամանակ կսկսեն բարեխղճորեն աշխատել, կհավաքեն սերմացուն, կցանեն: Սերմացվի հարցում մենք չենք

կարող մեղմ քաղաքականություն վարել, մենք չենք կարող ներողամիտ վերաբերմունք ցույց տալ վոչ միայն նրա համար, վոր հացահատիկ չկա, այլ նաև նրա համար, վոր դա նշանակում է վորոշ չափով հրաժարվել դեռ ևս զոյություն ունեցող սաքոտաժների դեմ պայքարելու»:

Սերմահավաքման գործում դանդաղում չպետք է լինի:

Կոլտնտեսականները սերմացվի փոխառությունը կոլտնտեսությանը պիտի տան մթերային կանխավճարներից: Այնուհետև ստուգել բոլոր դեղերը, հարդը և ծղնոտը, ներանք կրկին կալելու և երնելու համար: Յեզիպտացորենի բերքահավաքը խնամքով կատարել յերկրորդ անգամ, իսկ վորտեղ անհրաժեշտ է՝ նույնիսկ յերրորդ անգամ: Անձնվեր կոլտնտեսականների ձեռքով պետք է հավաքվեն բոլոր սերմացուները: Կոլտնտեսությունն ինչքան շատ ցանի 1933 թվի գարնանը, այնքան ավելի հաջողությամբ կծածկի նա այն պակաս ցանքսը, վոր նա կատարել է աշնանը, այնքան ավելի շատ յեկամուտ կստանա, այնքան ավելի բարձր կլինի աշխորի արժեքը, այնքան ավելի լավ կապրի կոլտնտեսականը:

Ճիշտ նշանակված ժամկետերում կոլտնտեսությունները պետք է կազմեն վոչ միայն համակոլտնտեսային, այլ նաև բրիգադային արտադրական պլանները: Նրանք պետք է կազմակերպեն մշտական արտադրական բրիգադներ, վերանորոգեն դուղատնտեսական ինվենտարը, այրեն դաշտային անպետք խոտերը, վոչնչացնեն մկներին:

Դաշտ դուրս գալու հենց առաջին օրվանից, յուրաքանչյուր կոլտնտեսական կոլտնտեսային գաշտում պիտի սկսի աշխատել տասնապատիկ յեռանդով, պահպանելով աշխատանքի խիստ կարգապահություն: Միշտ պետք է հիշել համոզելու և ստիպելու մեթոդների մասին: Պետք է իմանալ, վոր Հյուսիսային Կովկասի ցանքսի մասին յեղած վորոշման մեջ ասված է.

«Խորհրդային Միության Ժողովրդական Կոմիտե»-ն Խորհուրդը և Համկոմկուսի (բ) Կենտրոնական Կոմիտեն մատնանշում են, Վոր առանց կոլտնտեսություններում աշխատանքի խիստ կարգապահություն սահմանելու, հնարավոր չէ հաջողություն անցկացնել զարնանացանը: Այս առնչությամբ այն կոլտնտեսականները, վորոնք աշխատանքի դուրս չեն գալիս և չարամտորեն անվույթ են վերաբերվում դաշտային աշխատանքին, այդպիսիներն անխնա կերպով պետք է պատժվեն և նույնիսկ կոլտնտեսությունից վտարվեն»:

Վորպեսզի կուլակին թույլ չտրվի վիժեցնել ագրոտելիսի կիլրառումը կոլտնտեսային դաշտերում, դրա համար յուրաքանչյուր կոլտնտեսական պետք է լավ ուսումնասիրի ագրոգիտություն և գյուղատնտեսական տեխնիկայի բոլոր նվաճումները, գիտենա իր կոլտնտեսությունից ցանքաշահանողությունը, թույլ չտա դաշտերի մասնատում, պայքարի մշակությունների ձիշտ հերթափոխություն համար, լավ խնամի ցեղերը: Այս միջոցառումները բարձրացնում են բերքը, ավելացնում են յեկամուտը և լավացնում կոլտնտեսականների կյանքը:

1933 թվին ևս կգտնվեն այնպիսի «կոլտնտեսականներ», վորոնք կուլակի ազդեցություն տակ հողը բացատնեղով կվարեն, կկոտրատեն ինվենտարը, կոլտնտեսային ձիուեն կվերաբերվեն վոչ վորպես իրենց, այլ ոտար ձիու, կամ իրենց հայեցողությունը «կիտնտնավորեն» շարքացանը, դուրս կքաշեն նրանց սերմացուն, կգողանան ցանքսի հացահատիկը: Մեծ մասամբսրանք այնպիսի մարդիկ են, վորոնք հաղարավոր թեթրովկապված են թե անցյալում և թե ներկայումս սպիտակ ալադակների, սպիտակ, եմիդրանտների և կուլակային տարբերի հետ: Սրանք կոլտնտեսականներ չեն, այլ բացարձակ թշնամիներ, վորոնց հետ պետք է վերաբերվել վորպես թշնամիների: Արմատախիլ անել վնասարարությունը, կըտբել թշնամու ձեռքը, վորը մոտնում է շարքացանի մեջ:

այնտեղից սերմացու գողանալու համար,—այս է ահա յուրաքանչյուր առաջավոր և իսկական գիտակից կոլտնտեսականի պարտականությունը:

Գարնանացանի հաջողությունը վճռում է ագրոտելիսի կայր բոլոր պահանջները կատարման վորակը և ժամկետերը: Սրանից և կախված կոլտնտեսությունից բերքը, յեկամուտը և կոլտնտեսականի աշխորի արժեքը: Սա վորոշում է կոլտնտեսականի կյանքի մակարդակը 1933 թվին, Պայքարը ժամկետերի և աշխատանքի բարձր վորակի համար կոլտնտեսային դաշտում—հենց իրեն, կոլտնտեսականի պարտականությունն և Յեթե կոլտնտեսականն ուղենա, ապա Կուլբանի պտղաբեր սեահողը (յեթե դա Կուլբանի կոլտնտեսական է), վորը մշակվում է կատարելագործված մեքենաներով, շատ ավելի լավ կապահովի նրա տնտեսական դրությունը, քան մենատնտես յեղած ժամանակ:

ՀԱՎԱՍԱՐՎԵԼ ԿՐԱՍՆՈ-ԱՐՄԵՅՍԿԱՅԱ ՍՏԱՆԻՑԱՅԻ ՀԱՐՎԱԾԱՅԻՆՆԵՐԻՆ

Կուլբանի հողերը Խորհրդային Միության ամենալավագույն հողերն են: Կուլբանը կարող է դառնալ սոցիալիստական հողագործությունից ծաղկած յերկրամասը: Յեկ հատկապես հենց այստեղ է, վոր կուլակությունն ախտվորեն կազմակերպում է չարամիտ սարտած՝ կուսակցություն և Խորհրդային իշխանություն բոլոր միջոցառումների դեմ: Իսկ Սլավյանսկու ռայոնի Պոլտավսկայա ստանիցայում, ուր սարտածն առանձնապես սուր կերպարանք ստացավ, տեղի ունեցավ ըստ եյության հակահեղափոխական յեղությունից, Ընկ, Շեբոլդաեն այս ստանիցայի մասին ասել և հետեկյալը.

«Հենց Պոլտավսկայա ստանիցայի որինակը, ուր ցանված է աշնանավար հողի հազիվ 30 տոկոսը, ուր անցյալ տարվա դաշտերը, Կուլբանի արգավանդ դաշտերը ծածկվել են հավանաբար մարդու հասակի բարձ-

բությամբ մոլախոտերով, ուր բոլոր ցանքատարածությունների մոտավորապես կեսը վոչնչացված է համարվում, ուր հացամթերման կարգով հեկտարից հանձնված է 1—1½ փութ հացահատիկ, —ցույց է տալիս, թե ինչպես կուլակը սաքոտած է կազմակերպում:

Պոլտավսկայա սե ստանիցան անխնա կերպով պատժված է խորհրդային իշխանության կողմից: Նրա բնակիչները Կուբանի սևահողից աքսորված են հյուսիսային յերկրամասեր:

Սակավահող ճահճային տեղերից Կուբանի սևահողը յեկան հյուսիսի ամենալավագույն, ամենաբարեխիղճ, կուլակացության գործին նվիրված կոլտնտեսականները: Պոլտավսկայան այլևս չի խայտառակելու Կուբանին, չի արատավորի համատարած կոլեկտիվացման յերկրամասին: Հյուսիսի կոլտնտեսականների բաղմամարդ միտինգը միջնորդություն հարուցեց Յերկրգործկոմի առաջ Պոլտավսկայա ստանիցան վերանվանելու Կրասնոարմեյսկայա: Յերկրգործ կոմը բավարարեց միտինգի պահանջը: Հինգ գյուղատնտեսական արտելների կազմակերպչական ժողովներում հյուսիսի կոլտնտեսականները խոսք տվին ընկ. Ստալինին, Կենտկոմին և Յերկրկոմին Կրասնո-Արմեյսկայա ստանիցան վերածել սոցիալիստական հողագործության ոջախի:

— Այս հողի վրա յեւջախատե՛լ—բացականչեց Մոսկվայի մարզի Կոլմենսկի ռայոնի կոլտնտեսական ընկ. Պախոմովը—այս հողն եւ չսիրե՛լ: Նրան համբուրել է պեղք, այլ վոչ թե ապականել: Մոսկվայի մարզի իմ կոլտնտեսությունը հայտնի յեր հաճարի բերքով, իսկ չե՞ վոր այնտեղ միայն կավահող է: Այստեղ մենք այդ չե վոր պիտի ցույց տանք:

Ընկ. Պախոմովը Մոսկվայի մարզի հռչակավոր հարվածայինն էր: Ընկ. Ստալինի անվան կոլտնտեսությունը, ուր նա աշխատում էր վորպես դաշտավար, անցյալ տարի տվեց մի հեկտարից 20 ցենտներ հաճարի բերք: Կոլտնտեսականները հացամթերումների պլանը կատարեցին դեռ հոկտեմ-

բերին, յեկամուտը նախորդ տարվա համեմատությամբ կրկնապատկվեց:

Յեւ ընտանիքի մեջ միայն հայրը չե, վոր հարվածային է: Ընկ. Պախոմովի ամբողջ ընտանիքը հարվածային է: Նրա վորդին՝ կոմյերիտական Ստեփանը հետաքրքրական մեջադեպը է պատմում Կոլմինսկու կոլտնտեսության մեջ կատարած իր աշխատանքի մասին:

Ստեփանն աշխատում էր վարի վրա, դերակատարում էր նորման: Նրա կողքին, գութանի հետեից գնում էր Անտոն Պալիմովը: Սա թե վատ և թե քիչ էր աշխատում: Նրա ցեխտոված գութանը վատ էր գնում, նրա բութ խոփը չէր կտրում հողաշերտը, այլ արորի նման ցատկում էր կարծր հողի վրայից: Անտոնը կատաղությամբ մտրակում էր նիհար ձիուն: Իսկ յերեկոյան բրիգադիրը կարգազրի մեջ նշանակում է. «հերկված է 0,30 հեկտար, նորման չի կատարված 0,20 հեկտարով, վարի վորակը ցածր է»:

Սակայն իզուր չէր վոր Անտոն Պալիմովի կողքին աշխատում էր հարվածայինի վորդին, կոմյերիտական Պախոմովը, վորն ապրում էր կոլտնտեսության հետ համերաշխ կյանքով, մեծ խանդավառությամբ պայքարում էր դաշտի իսկական վարի համար, սոցիալիստական հողագործության արտադրանքի բարձր վորակի համար: Սոյոպան գիտեր, վոր չմաքրված գութանով վարելը, բացատներ թողնելը, վարի խորությունը չպահպանելը և վարելաշերտի վատ մշակելը—նշանակում է իջեցնել բերքը, պակասեցնել կոլտնտեսության յեկամուտը և աշխուրբի արժեքը: Նա գիտակցում էր, վոր յուրաքանչյուր հարվածային կոմյերիտական պետք է լինի աշխատանքի բարձր վորակի համար մարտնչող՝ կոլտնտեսային դաշտերում:

— Տեսնո՞ւմ ես, քեռի Անտոն, յես քեզանից լավ եմ աշխատում,—ասաց նրան Սոյոպան: Փորձիր ինձանիցավելի շատ և լավ աշխատել, անցիր ինձանից, յերետասարդիցս:

Կոմյերիտականի խոսքերն իսկույն ազդեցին կոլտնտեսականի սրտի վրա: Այսպես եւ սկսվեց անհատական մըր-

ցումը վարի վորակի համար: Բոլոր կոլտնտեսականները վորոշեցին հետևել մեկը մյուսին և պահանջեցին բրիգադերից վորակի հարցերի մասին բացատրություններ:

Ամեն յերկու բրիգադերը գութանավորներին ապրիլ եր կարգադրեր: Իսկ մի անգամ կարգադրերի հետ միասին նա բաժանեց նաև ագրո-առաջադրանք, վորտեղ մանրամասնորեն ցույց եր տրվում, թե ինչպես պետք ե վարել, և հայտնեց, վոր աշխտերը հաշվվելու յեն այդ ագրո-առաջադրանքի կատարման համաձայն:

Ստյոպան բարձր ձայնով կարգաց այդ ագրո-առաջադրանքը բոլոր կոլտնտեսականներին և առանձնապես ուշադրությամբ բացատրեց այն՝ Անտոն Պալիմովին, վորն այնուհետև սկսեց աշխատանքից հետո դուրս քաշել գութանն ակոսից, մաքրել հողից, սրել խոփը և հարթել դարուկոսները: Այն բրիգադը, վորտեղ աշխատում եր Ստյոպա Պալիմովը, շատ լավ եր հերկում դաշտը: Կոլտնտեսության հողը, ուր աշխատում եր նրա հայրը վորպես դաշտավայր, յերկրին տվեց ռեկորդային բերք:

Հենց նույն խանդավառությամբ և համառությամբ եր, վոր հյուսիսի կոլտնտեսականները ձեռնարկեցին հակահեղափոխության ոջախ հանդիսացող Պրոտավսկայա ստանիցան՝ սոցիալիստական հողադործության ոջախի վերածելուգործը:

Կոլտնտեսություններ կազմակերպվելու և տնտեսություններն ի մի հավաքելու աշխատանքը ծավալվեց դալուց հենց անմիջապես հետո: Մոսկվայի մարզի կոլտնտեսականները, իմանալով, վոր 20 հեկտար խաղողի այգիները վոչնչանալու սպառնալիքի տակ են, առանց մի բույս դանդաղելու և առանց սպանելու բրիգադների կազմակերպմանը, ուղեվորվեցին դաշտ՝ վորելու խաղողի այգետունիկերը:

Ծիշտ մի որում Կրասնո-Արմեյսկայա ստանիցայի կոլտնտեսականները կանոնավորապես կարգի բերին անասնաբուժական ապրանքային ֆերմաները, վորոնք անխնամ եյին թողնված պոլտավսկայացի վնասարարների կողմից: Հենց առաջին իսկ շաբաթվա մեջ վոչնչացվեցին 500 հեկտար

տարածության վրա դանվող մոլոխտերը, ավարավեց ստանիցան մկներից մաքրելու աշխատանքը, այրվեցին 300 հեկտար տարածության չափ արևածաղկի ցողունները, ուժեղ թափով ծավալվեց ինվենտարի նորոգումը:

Հետևելով Հյուսիսի կոլտնտեսականների որինակին, վորգեվորվելով նրանց արտադրական խանդավառությամբ, մոլախոտերի դեմ պայքարելու դուրս յեկան նաև ընկ. Ֆրոնզեյի անվան տեղական կոմունայի կոլտնտեսականները, վորը (կոմունան) մաքրված ե կուլակներից և սպիտակ գըլվարդիականներից, և վորը խորտակեց նաև ստանիցայում դեռ մնացած սաբոտաժը:

Հյուսիսի կոլտնտեսականները վառվում են հակահեղափոխական սաբոտաժիկներին դասակարգայնորեն ատելու վորգով: Աշխատանքային վորգեվորությամբ խանդավառված նրանք Կուրան գալուց անմիջապես հետո, պայքարի դուրս յեկան բարձր բերքի համար, իսկույն սկսեցին նախապատրաստվել դարնանացանին և պայքարել կուլտուրական կենցաղի համար: Պրոլետարական պետության, խորհրդային յերկրի և կոլտնտեսության շահերը նրանք դարձրին իրենց սեփական շահերը: Նրանք առաջին հերթին իրենց ուշադրությունը դարձրին կոլտնտեսային դաշտի վրա:

— Մենք ցույց կտանք, թե ինչպես պետք ե սոցիալիստորեն մշակել Կուրանի պողաբեր սևահողերը, ինչպես պետք ե բարձրացնել բերքը,—գրում են նրանք Համկոմկուսի (բ) Հյուս. Կովկասի Ֆերկրկոմի ուղարկած տեղեկագրում:

Բարգավաճող Կրասնո-Արմեյսկայա ստանիցայի հարվածայինները փայլուն որինակ են հանդես բերում, թե ինչպես պետք ե աշխատեն Հյուսիսային Կովկասի, մանավանդ Կուրանի բոլոր կոլտնտեսությունները: Ահա մարդիկ, վորոնք որինակ պետք ե հանդիսանան Կուրանի և յերկրամասի բոլոր կոլտնտեսականների համար՝ Նրանց հետևելով, նրանք պետք ե ասեն.

Յեւդի յեվ կոյսնեստության շահերը—մեր շահերն են: Մեր գլխավոր ուժադրությունը դարձնենք կոյսնեսային դաշտին:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ.

Կուրանի հոդի հոշակը	1
Կուրանի կուրանտեսություններն ուղում են առև ակորդային բերը	4
Ինչ են ապրիս Կուրանի կուրանտեսությունները	8
Հաշվետվութուն անխնամ դաշտերից	12
Նայեցեք Նիկիտա Սափոջենկոյի ազարակին	14
Կուրակ Սարանի գործողությունների ծրագիրը	18
Վերջնականապես չլախճաված կուրակութունը խանգարում է նոր, անցիտիստական կյանք կառուցելուն	21
Կուրանտեսային դաշտում աշխատելն ավելի լավ է	26
Յուրաքանչյուր կուրանտեսական պետք է լինի գարնանացանի հարվածային	32
Հավասարվել Կրանո-Արմեյսկայա ստանիցայի հաբվածայիններին	39



От. редактор
В. К. Цовьян
Тех. редактор
Г. М. Маркарян

3 25
Ас-1
11-М

Сдано в наб. 7/II 1933 г.
Сдано в печ. 9/II 1933 г.
Объем 1 1/4 печ. листа
Тираж 2000 экз.

ՀՀ Ազգային գրադարան



NL0209969

30.629

ՀԻՆԸ 20 ԿՈՊ.
Цена 20 коп.

6161

248 1

807

807 0



На армянском языке

КОРЯКОВ М.

КОЛХОЗНОЕ ПОЛЕ НА
ПЕРВЫЙ ПЛАН

И-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ԳՐԱԳԱՆԱԾՈՐ

ՈՍՍՏՈՎ-ԴՈՆ, ՍՈՍՎՈՐՈՎԱԾԱ ՓՈՂ. 53

ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՅԵՆՏՐ)